ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

ԵՐԵՔՇԱԲԹԻ
30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թ. № 24 (332)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

**Տասնմեկ տարի առաջ՝ 2003թ. հոկտեմբերի 1-ին, լույս տեսավ «Սյունյաց երկրի» անդրանիկ համարը:**



# Սուրեն Խաչատրյանին սյունեցիները դիմավորեցին շուքով

**Սեպտեմբերի 26-ին Սիսիանում, Գորիսում եւ Կապանում առանձնահատուկ ջերմությամբ, աղուհացով, երգ-երաժշտությամբ դիմավորեցին Սյունիքի նորանշանակ մարզպետ Սուրեն Խաչատրյանին: Գորիսում Սուրեն Խաչատրյանի դիմավորումը վեր էր ածվել համաժողովրդական յուրօրինակ տոնակատարության:**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ Սուրեն Խաչատրյանը նշանակվել է Սյունիքի մարզպետ: ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի ուղեկցությամբ նորանշանակ մարզպետը սեպտեմբերի 26-ին ժամանեց մարզ եւ անցավ իր պարտականություններին:

Սուրեն Խաչատրյանին սյունեցիները դիմավորեցին շուքով: Մարզի դարպասների մոտ (Գորայքում) նախ նրան ընդառաջ էին եկել սիսիանցիները:

Գորիսի մուտքն ազդարարող հուշակոթողի մոտ Սուրեն Խաչատրյանին դիմավորելու էին եկել հարյուրավոր գորիսեցիներ: Իսկ Վանանդաձորում (Չայզամի) նորանշանակ մարզպետին ընդունեցին Կապան քաղաքի եւ տարածաշրջանի համայնքների, ինչպես եւ Մեղրի ու Ագարակ քաղաքների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Այնուհետեւ Սյունիքի մարզպետարանի դահլիճում ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը մարզպետարանի աշխատակազմին ներկայացրեց Սուրեն Խաչատրյանին՝ մաղթելով նրան բեղմնավոր գործունեություն: Հանդիպմանը ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ով շնորհակալություն հայտնեց հանրապետության կառավարությանը՝ վստահության, սյունեցիներին՝ ջերմ ընդունելության համար: Սուրեն Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց նաեւ նախկին մարզպետ Վահե Հակոբյանին՝ Սյունիքի մարզպետի պատասխանատու պաշտոնում մեկամյա գործունեության համար:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՍՈՆՅԱ ՄԻՐԶՈՅԱՆ. «Հայոց Մեծ եղեռնն Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքներից մեկն է»

**Սյունիքը 1-ին աշխարհամարտում**

**ՀՀ ազգային արխիվում պահվող Առաջին համաշխարհային պատերազմին առնչվող փաստաթղթերի, պատերազմը սկսվելու 100-ամյակի կապակցությամբ կատարվող աշխատանքների մասին է զրույցը Հայաստանի ազգային արխիվի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Սոնյա Միրզոյանի հետ:**

**– Տիկի՛ն Միրզոյան, Հայաստանի ազգային արխիվում Առաջին աշխարհամարտին առնչվող ի՞նչ փաստաթղթեր ունեք:**

– Ազգային արխիվն Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող բավականաչափ նյութեր ունի, որոնք կարելի է ներկայացնել առանձին բաժիններով: Նշեմ, որ այդ տարիներին գործել են ազգային, Անդրկովկասյան տարբեր հասարակական կազմակերպություններ, պետական կառույցներ, որտեղ ուղարկվել են համապատասխան փաստաթղթեր: Դրանք հիմնականում պարունակում են տեղեկություններ կազմակերպական աշխատանքների, ցուցաբերված հումանիտար օգնության մասին: Բացի դրանից՝ փաստաթղթերի մի ստվար հատվածը կամավորական շարժմանն է առնչվում, որ սկսվել էր Թուրքիան պատերազմի մեջ մտնելուց հետո: Մանրամասն տեղեկություններ կան կամավորական ջոկատների ձեւավորման, դրանց գործունեության, ձեռք բերված հաջողությունների մասին: Չմոռանանք, որ Հովհաննես Թումանյանի առաջարկով 1918թ. վերջից մինչեւ 1919թ. ապրիլ ամիսը գործել է հանձնաժողով, որը հավաքել է նյութեր պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների մասին: Այդ հանձնաժողովի մեջ եղել է մի առանձին խումբ, որը զբաղվել է պատերազմում հայերի մասնակցության ուսումնասիրմամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ խումբը ղեկա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

# Հյուր էին դիվանագետները

**Սեպտեմբերի 20-ին մարզկենտրոնում էր Հայաստանում Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունը, դեսպանատան խորհրդական, Հայաստանում** «Россотрудничество» **ներկայացուցչության ղեկավար Մարկ Կալինինը, դեսպանատան հյուպատոսական բաժնի վարիչի պաշտոնակատար Ազամատ Տոլստունովը, ՌԴ միգրացիոն ծառայության Հայաստանի ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Միխայիլ Չաբդարովը, դեսպանատան այլ աշխատակիցներ, ինչպես նաեւ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի նախագահ Աիդա Հարությունյանը:**

Հյուրերը նախ այցելեցին Կապանի քաղաքապետարան, որտեղ կայացած հանդիպման ընթացքում քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Նելլի Շահնազարյանը հակիրճ ներկայացրեց Կապանի անցյալն ու ներկան, մարզկենտրոնի արդյունաբերական ներուժը, ուսումնական հաստատությունները եւ այլն: Իսկ հայ-ռուսական բարեկամության «Россияне» կազմակերպության նախագահ Լյուդմիլա Աղախանյանն անդրադարձավ կազմակերպության 20-ամյա ուղուն:

Սյունիքի մարզկենտրոնում մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանի հետ հանդիպման ժամանակ խոսվեց երկու ժողովուրդների համագործակցության, մարզում ռուսաց լեզվի ուսուցման դրվածքի մասին, եւս մի անգամ բարձրաձայնվեց հայտնի ասացվածքը՝ քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

Կապանի N3 հիմնական դպրոցի դահլիճում դիվանագետները հանդիպեցին «Россияне» հասարակական կազմակերպության անդամների հետ: Նրանց եւ միջոցառման մյուս մասնակիցներին պարզաբանեցին հարցեր ու դրույթներ, որոնք բխում են «Ռուսաստանի Դաշնության օտարերկրյա քաղաքացիների իրավիճակի մասին» օրենքից, պատասխանեցին նրանց հարցերին: Դրանք առնչվում էին Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիություն ստանալուն, այդ երկրում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելուն, միգրացիոն քաղաքականության մեջ կատարված փոփոխություններին եւ այլն: Մասնավորապես դեսպանատան խորհրդական Մարկ Կալինինը նշեց, որ յուրաքանչյուր տարի Հայաստանից մոտ 200 դիմորդ ընդունվում է Ռուսաստանի Դաշնության բուհեր (ընդ որում՝ դրանց մի մասը հեղինակավոր) եւ հավելեց, որ մրցակցությունը բարձր է՝ մեկ տեղի համար հինգ դիմորդ: Բուհ ընդունվածները սովորում են անվճար եւ կրթաթոշակ են ստանում:

Օրվա երկրորդ կեսին հյուրերն այցելեցին Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարան, ծանոթացան ցուցադրանքին: Թանգարանում բացված է հայ-ռուսական բարեկամության անկյուն, որտեղ էլ դպրոցականները հյուրերի առջեւ հանդես եկան գրական-երաժշտական համադրույթով, որը վերաբերում էր հայերի եւ ռուսների՝ դարերից եկող բարեկամությանը: Երեւանից ժամանած պատվիրակության անդամներն այցելեցին նաեւ Բաղաբուրջի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցեցին երկրորդ աշխարհամարտում եւ Արցախյան պատերազմում ընկածների հիշատակին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# ՌՈԲԵՐՏ ԿԱՄՈՅԱՆ. «Ես նկարելու եմ նաեւ մահվանից հետո»

Խոսք հրաժեշտի

**Ժամանակի հոլովույթները մեզ ոչ այնքան ուրախ, որքան փխուր անակնկալներ են մատուցում: Դեռ չէինք հասցրել «մարսել» մեր հայրենակից Ռոմիկ Սարդարյանի մահվան գույժը, երբ խմբագրությունում սպացվեց եւս մի թեւաթափ անող, մինչեւ հոգու խորքը փխրեցնող բոթ՝ մահացել է Ռոբերտ Կամոյանը՝ ուղղամիտ մարդը, ճշմարիտ արվեստագետը, ով, Կապանում ճանաչված ու հարգված լինելով, նաեւ վերջին փասը փարում մտերմական ու ստեղծագործական կապերով կապված էր «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության հետ: Դժվար է հավատալ, որ այլեւս նրան չենք հանդիպելու կտավներով ծանրաբեռ իր արվեստանոցում՝ նկարակալի առջեւ, վրձինը ձեռքին, նոր գեղանկար արարելիս, նաեւ խոհափիլիսոփայական զրույցներ անելիս կյանքի, գրականության, արվեստի մասին:**



Իսկ նա այնքա՞ն մտահղացումներ ուներ, չիրագործված, կիսատ ծրագրեր…

Ռոբերտ Կամոյանը ծնվել է 1937թ. հունվարի 6-ին Կապանում, միջնակարգ կրթությունը ստացել է Կապանի N3 (ռուսական) դպրոցում, այնուհետեւ մեկնել է Լենինգրադ եւ ընդունվել տեղի Ի. Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիան: 1954-1955թթ. այնտեղ սովորելուց հետո, հոր առողջական վիճակով մտահոգ, երկրորդ կուրսից ուսումն ընդհատել է, վերադարձել Կապան եւ աշխատանքի անցել մսի կոմբինատի սառնարանային տնտեսությունում՝ կոմպրեսորային արտադրամասի մեքենավարի օգնական, ապա՝ Բարաբաթումի պղնձահանքում՝ բանվոր:

1958թ., երբ վերականգնվել էր հոր առողջությունը, մեկնել է Երեւան, ընդունվել գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետ, որը ռեժիսուրա մասնագիտությամբ ավարտել է 1963 թվականին: Միաժամանակ սովորել է նույն ինստիտուտի գունանկարչական ֆակուլտետում, որն ավարտել է 1964-ին նկարիչ-գունանկարչի ու մանկավարժի մասնագիտությամբ: Գեղարվեստաթատերական ինստիտուտում ուսանել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Արմեն Գուլակյանի, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Էդուարդ Իսաբեկյանի, հանրապետության ճանաչված այլ նկարիչների եւ ռեժիսորների ղեկավարությամբ:

1965թ. աշխատել է Մեղրու շրջանի Ագարակ քաղաքի մշակույթի տան տնօրեն: 1966-1967թթ. մայրաքաղաքում էր՝ Երեւանի Հ.Թումանյանի անվան պետական տիկնիկային եւ Կ.Ստանիսլավսկու անվան պետական

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 11

## լուրեր

ՀՀ Անկախության տոնի առթիվ ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերած նվիրումի համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության պետ, գնդապետ Արշակ Գալստյանը ՀՀ նախագահի 2014թ. սեպտեմբերի 9-ի հրամանագրով պարգեւատրվել է Մարտական ծառայության մեդալով:

ՀՀ Անկախության տոնի առթիվ իրավակարգի ամրապնդման, հասարակական կարգի պահպանման եւ հանցավորության դեմ պայքարի գործում ներդրած ավանդի համար ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ Սուրեն Սահակյանը ՀՀ նախագահի 2014թ. սեպտեմբերի 13-ի հրամանագրով պարգեւատրվել է Մարտական ծառայության մեդալով:

ՀՀ Անկախության տոնի առթիվ թատերական արվեստի զարգացման գործում ունեցած վաստակի համար Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի առաջատար դերասան, ռեժիսոր Շանթ Հովհաննիսյանին ՀՀ նախագահի 2014թ. սեպտեմբերի 18-ի հրամագրով շնորհվել է ՀՀ վաստակավոր արտիստի պատվավոր կոչում:

ՀՀ Անկախության տոնի առթիվ տնտեսության բնագավառում նշանակալի գործունեության համար «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենը պարգեւատրվել է Անանիա Շիրակացու մեդալով:

Սեպտեմբերի 21-ին Անկախության 23-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունների շարքը սկսվեց Կապանում տեղակայված զորամասում, որտեղ տեղի ունեցավ օրվա խորհրդին պատշաճող հանրահավաք: Այնուհետեւ հանդիսությունների շարքը տեղափոխվեց Գարեգին Նժդեհի հրապարակ: Այստեղ տեղի ունեցավ զինվորական շքերթ, որից հետո իրենց ռազմարվեստը եւ հմտությունները ցուցադրեցին հետախույզները: Հանդիսության մասնակիցներն այնուհետեւ բարձրացան Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց Մեծ եղեռնի եւ մերօրյա ազատամարտում ընկածների հիշատակին: Երեկոյան արվեստի պետական քոլեջում տեղի ունեցավ տոնական համերգ՝ մասնակցությամբ արվեստի պետական քոլեջի եւ Կապանի արվեստի, երաժշտական դպրոցների դասախոսների ու սաների:

Եվրոպական ժառանգության օրեր ծրագրի շրջանակում (մեր հանրապետությունում անցկացվեց սեպտեմբերի 27-ին եւ 28-ին) Կապանի տարածաշրջանային պետական քոլեջում անցկացվեց գիտաժողով «Հետադարձ հայացք 100 տարի անց» խորագրով: Այն անցկացվեց Կապանի երկրագիտական թանգարանի, պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության եւ Կապանի տարածաշրջանային պետական քոլեջի համագործակցությամբ: Նստաշրջանը նվիրված էր Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին եւ նպատակ ուներ պատմական էքսկուրսի միջոցով ցույց տալ այդ պատերազմում հայ ժողովրդի՝ մշակութային ցեղասպանության հետեւանքով կորցրած պատմական արժեքները: Քոլեջի տնօրեն Անժելա Մաքյանը հակիրճ ներկայացրեց գիտաժողովի նպատակն ու նշանակությունը: Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետ Աստղիկ Հակոբյանի զեկուցումը նվիրված էր մինչեւ հայոց եղեռն ընկած ժամանակահատվածում թուրքական կառավարության հայահալած քաղաքականությանը: Քոլեջի դասախոս Վրեժ Բադալյանը ներկայացրեց Կովկասի ճակատի Էրզրումի, Դիլանի եւ Սարիղամիշի ճակատամարտերը, Կապանի երկրագիտական թանգարանի աշխատակից Դավիթ Հակոբյանն անդրադարձավ Առաջին աշխարհամարտի տարիներին Սյունիքի սոցիալ-տնտեսական դրությանը, իսկ թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը՝ Առաջին աշխարհամարտում սյունեցիների մասնակցությանը: Օրվա բանախոսները պատասխանեցին միջոցառման մասնակիցների հարցերին, վերջիններս նկատառումներ հայտնեցին ընթերցված զեկուցումների շուրջ:

Հայտարարություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Տրանսպորտի բաժնի մասնագետ / Լոգիստիկայի եւ բեռնափոխադրումների բաժին

Վայրը՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Քաջարան

Աշխատանքի նկարագրությունը. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին անհրաժեշտ է թեկնածու բեռնափոխադրումների բաժնի մասնագետի պաշտոնում նշանակվելու համար: Թեկնածուն պատասխանատու կլինի ապրանքների տեղափոխման ողջ պրոցեսը կազմակերպելու համար (բաժնի պետի հսկողության ներքո) աշխարհի տարբեր երկրներից Կապան/Քաջարան եւ հակառակը:

Պարտականությունները
- Կազմակերպել բեռների տեղափոխման պրոցեսը՝ մշտական կապի մեջ լինելով գործընկերների հետ (տրանսպորտային ընկերություններ, մատակարարներ, գնորդներ):
- Պատշաճ կերպով աշխատել փաստաթղթերի եւ պայմանագրերի հետ:
- Վերահսկել եւ համոզվել, որ բոլոր առաքումներն իրականացվել են կիրառվող օրենքներին եւ կանոնադրություններին համապատասխան:

Պահանջվող որակավորումները
- Բարձրագույն կրթություն:
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ բեռնափոխադրման ոլորտում (բեռնատարներ, երկաթուղային, ծովային եւ օդային բեռնափոխադրում):
- Բեռնափոխադրման ոլորտի վերաբերյալ Հայաստանի եւ միջազգային օրենքների եւ կանոնադրությունների լավ իմացություն:
- Բեռնափոխադրման գործընթացում բեռների հետ տրամադրվող փաստաթղթերի իմացություն:
- Ռուսերենի իմացություն:
- Անգլերենի իմացությունը ցանկալի է:
- Համակարգչային հմտություններ:
- Incoterms-ի իմացություն:
- Մենակ, ինչպես նաեւ թիմային աշխատանքի ունակություն (բաժնի ղեկավարի հսկողության ներքո):
- Ճշգրիտ աշխատելու եւ պատասխանատվության զգացում:
- Քաջարան քաղաքում (Հայաստան) լրիվ գրաֆիկով աշխատելու հնարավորություն:

Ուշադրություն
- Կարող են դիմել միայն համապատասխան աշխատանքային փորձ ունեցող անձինք: Առանց համապատասխան աշխատանքային փորձի ներկայացված ռեզյումեները չեն ընդունվի:
- Ռեզյումեներն ու ինքնակենսագրականներն ուղարկել hr@zcmc.am հասցեով:



# Սյունիք. աշնանացանը ուշանում է

Գյուղատնտեսություն

**Սյունիքում՝ Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանի 17 գյուղում, մոտ մեկ միլիարդ դրամի ներդրմամբ Համաշխարհային բանկի միջոցներով ջրարբիացման ծրագիր է իրականացվում, որը, բացի ոռոգման ջրի խնդիր լուծելուց, նաեւ գյուղտեխնիկայի տրամադրում է նախատեսում այդ գյուղերին: Որոշ գյուղեր, սակայն, ծրագրում համաֆինանսավորման իրենց բաժինը վճարելու խնդիր ունեն (համայնքը 20 տոկոս ներդրում պիտի կատարի), որի պատճառով ծրագրի իրականացումը դանդաղում է: Այդ եւ այլ մտահոգիչ խնդիրների ու մարզում բերքահավաքի արդյունքների նախնական ամփոփման շուրջ է հարցազրույցը Սյունիքի մարզպետարանի բնապահպանության եւ գյուղատնտեսության վարչության պետ Սամվել Թանգյանի հետ:**

**– Պարո՛ն Թանգյան, եթե ամփոփենք 2014թ. գյուղատնտեսական աշխատանքների արդյունքներն ու բերքահավաքի նախնական պատկերը, ի՞նչ ցուցանիշներ ունենք Սյունիքում:**

– Ներկայումս մարզում հացահատիկի բերքահավաքն ավարտված է: Ճիշտ է, ունենք կարկուտից կամ սակավ տեղումներից տուժած տարածքներ, բայց բերքահավաքն ընդհանրապես այս տարի նորմալ է ընթացել: Հակված չեմ ամբողջ մեղքը բարդել եղանակի կամ սերմացուի վրա, բավարար բերք ստացած ֆերմերի դաշտի կողքին մեկ այլ ֆերմեր բերք չի ստանում:

Ընդհանուր հացահատիկային մշակաբույսերի 24 311 հա ցանքից (մոտ 15 000 հեկտարի վրա ցանված է եղել ցորեն) ունեցել ենք մոտ 73 500տ բերք, մեկ հեկտարի միջին բերքատվությունը՝ 30.2ց:

Ստացվել է 14 500տ բանջարեղեն, միջին բերքատվությունը՝ 174.4 ց: Մարզում ստացվել է 6100տ պտուղ եւ հատապտուղ, միջին բերքատվությունը՝ 30.9ց, 1550 հեկտարից ստացվել է 28 210տ կարտոֆիլ՝ 182ց միջին բերքատվությամբ: Բայց բանջարաբոստանային կուլտուրաների բերքահավաքը դեռ ընթացքի մեջ է:

Տարին սակավաջուր էր, հուլիսից արդեն զգացինք ջրի պակասությունը, այժմ շատ համայնքների արոտներում նույնիսկ անասունները խմելու ջուր չունեն:

Այս տարի ծիրանը մարզում շատ քիչ էր, նաեւ խնձորի պակաս է զգացվում, բայց որոշ պտղատեսակների նորմալ բերք է սպասվում, օրինակ, առանձնապես առատ է տանձը: Մեղրիում եւ Կապանում գրեթե ընկույզ չկա, Սիսիանում համեմատաբար կա, բայց ոչ նախկին տարիների չափ: Տարին անբարենպաստ էր մեղուների համար, եւ մեղրը քիչ է ու թանկ:

**– Գյուղացին բողոքում է նաեւ խոտի սակավությունից, անասնակերի քանակն ի՞նչ ցուցանիշներ է գրանցել:**

– Այո՛, 2014-ին խոտի սակավություն կա: Եթե անցած տարի կուտակվել էր 126 000տ խոտ, այս տարի՝ 98 000տ: Բայց անցած տարիներին եղել են խոտհարքի վայրեր, որոնք մարդիկ չեն օգտագործել, հիմա դրանք էլ են հնձում: Ընդ որում՝ անասնագլխաքանակի աճ էլ ունենք, եւ կերի պակասն ավելի է սրվում: Դրա համար ավելանում է նաեւ ծղոտի կուտակումը. այն վայրերում, որտեղ նախկինում ծղոտ չեն օգտագործել, այս տարի ծղոտն էլ



են կուտակում: Ծղոտով եւ նախկինում չհնձվող տարածքների հաշվին անասնակերի խնդիրը որոշ չափով կմեղմվի:

**– Իսկ ինչպե՞ս է ընթանում աշնանացանը:**

– Գյուղատնտեսության համար զուտ բնակլիմայական առումով բավականին վատ աշուն եմ տեսնում: Օրինակ, Սիսիանի տարածաշրջանում (զրույցը կայացել է սեպտեմբերի 17-ին) արդեն պետք է աշնանացանն ավարտված լիներ, բայց քանի որ անձրեւ ու հողում խոնավություն չկար, գյուղացիների մեջ աշնանացանի հետ կապված մտավախություն կա: Այն ուշացավ, սպասում էին հողի խոնավացմանն ու տեղումներին, դեռեւս ընդամենը 1000 հա աշնանացան է արվել, դեռ 15-20 հազար հա պիտի արվի: Այլ խնդիրներ չկան: Մարզն ապահովված է սերմացուով, անհրաժեշտ վառելիքով: Սյունիքին տարվա համար հատկացված է եղել 1 500 000լ դիզելային վառելիք, ներկայումս օգտագործված է մոտ 950 000լ, գինը շուկայականից մոտ 100 դրամով ցածր է: Պարարտանյութի խնդիր եւս չունենք, ով ինչքան վճարել է, ստացել է, եթե հայտ ներկայացնեն, կարող ենք էլի ապահովել. այսինքն՝ այն, ինչ որ անհրաժեշտ է եւ կախված է պետությունից, պատ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

# ՍՈՆՅԱ ՄԻՐԶՈՅԱՆ. «Հայոց Մեծ եղեռնն Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքներից մեկն է»

Սյունիքը 1-ին աշխարհամարտում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

վարել է Ալեքսանդր Կուլիբյակինը, ով փաստաթղթեր է հավաքել ոչ միայն հանձնաժողովի գործունեության մասին, այլեւ հուշեր տարբեր գեներալների, նրանց գործունեության մասին: Փաստաթղթերի մյուս խումբն առանձին զինվորականների հետ կապված անձնական ֆոնդերով է ներկայացված, ինչպես օրինակ՝ Թովմաս Նազարբեկովի՝ Հայկական կորպուսի ստեղծման ղեկավարի ամբողջական ֆոնդ՝ հուշեր, նամականի, Անդրանիկ Օզանյանի ֆոնդ, որտեղ բավականին նյութեր կան նաեւ պատերազմական գործողությունների մասին: Բավականաչափ փաստաթղթեր կան Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ որբերին եւ փախստականներին տարբեր կազմակերպությունների կողմից ցուցաբերված հումանիտար օգնության մասին: Պատերազմի ժամանակ ստեղծվել են թե՛ կենտրոնական, թե՛ տեղական բարեգործական կազմակերպություններ, որոնց մասնաճյուղերը գործել են սկսած Միջին Ասիայից մինչեւ Ռուսաստանի հայաշատ վայրերում: Մեր ունեցած փաստաթղթերն ամբողջական տեղեկություններ են տալիս թե՛ մարդկային, թե՛ նյութական օգնության մասին: Մի խոսքով՝ կազմակերպական, պատերազմի վնասների եւ հետեւանքների մասին ունենք բավականին հետաքրքիր փաստաթղթեր, որոնք դեռեւս ուսումնասիրության կարիք ունեն:



Սոնյա Միրզոյան, Հայաստանի ազգային արխիվի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու

**– Ազգային արխիվում պահվող փաստաթղթերը հայերե՞ն, թե՞ ռուսերեն են:**

– Չմոռանանք, որ մենք գտնվում էինք ռուսական տիրապետության տակ, եւ բնական է, որ հիմնական նյութերը ռուսերեն են: Ինչ խոսք, կամավորական շարժմանը վերաբերող որոշակի հայերեն փաստաթղթեր էլ ունենք, բայց հուշերն ամբողջովին ռուսերեն են:

**– Փաստաթղթերն ըստ մարզերի առանձնացվա՞ծ են:**

– Նման տարբերակումը բացառվում է, քանի որ եղել են ընդհանուր կոմիտեներ, տեղական կոմիտեներ չեն եղել: Միակ հատուկ կոմիտեն Ալեքսանդրապոլում էր, քանի որ Թուրքիայի սահմանին մոտ էր. այնտեղ առանձին ֆոնդեր չկան, կան զինվորական հոսպիտալներ, բուժկետեր, բայց դա չի նշանակում, որ նյութերը միայն այդ վայրին են առնչվում, պարզապես սա այն վայրն է, որտեղ կուտակվել են որբերն ու փախստականները:

**– «Սյունյաց երկիր» թերթը Կապանի երկրագիտական թանգարանի ջանքերով հրապարակել է Առաջին աշխարհամարտում զոհված, վիրավոր եւ անհետ կորած սյունեցիների ցուցակները, որտեղ մեղրեցիների մասին տեղեկությունները բացակայում են համապատասխան փաստաթղթեր չունենալու պատճառով:**

– Հնարավոր է, բայց դրա շտկումը բարդ աշխատանք է եւ պահանջում է երկարատեւ ուսումնասիրություն: Ես գրեթե երեք տարի է՝ զբաղվում եմ Առաջին աշխարհամարտի մասնակից սպայակազմի ուսումնասիրությամբ, քանի որ պատերազմը սկսվել է 1914թ. եւ ավարտվել 1918թ., կարծում եմ, 2018թ. այդ աշխատանքն արդեն պատրաստ կլինի: Բավականին ծանր աշխատանք է, եւ ոչ միայն բարձր սպայակազմն եմ ուսումնասիրում, այլեւ՝ ամենացածրը: Սպայակազմն ամբողջովին ուսումնասիրելուց հետո միգուցե հնարավոր լինի մեղրեցիներին առանձնացնել: Ինչ վերաբերում է պատերազմի մասնակիցներին, դա գրեթե հնարավոր չէ առանձնացնել:

**– Պատմագիտության մեջ Առաջին աշխարհամարտի մասնակից հայերի թվաքանակի մասին շրջանառվում են տարբեր վարկածներ:**

– Ճիշտ է, պատմագիտության մեջ դեռեւս ստույգ թիվ չկա նշված: Խնդիրն այն է, որ ի սկզբանե Թուրքիան չի մտել պատերազմող երկրների կազմի մեջ: Հայերն Անդրկովկասից մեկնում էին Արեւմտյան ճակատ: Հոկտեմբեր ամսից, երբ արդեն Թուրքիան մտավ պատերազմի մեջ, սկսվեցին տեղափոխություններ: Այնտեղից հայերին ուղարկում էին Արեւելյան Հայաստան, առավել եւս որ ստեղծվեց Հայկական կորպուսը: Այսօրվա դրությամբ ստույգ թիվ չկա, եւ շրջանառվում են տարբեր վարկածներ: Կարծում եմ՝ այդ հարցը նույնպես լուրջ ուսումնասիրության կարիք ունի, բայց կան առանձին մասնագետներ, ովքեր զբաղվում են այդ հարցով. միգուցե նրանք կարողանան տալ այդ հարցի պատասխանը:

**– Հետաքրքիր է՝ կա՞ն նյութեր զանգեզուրցիների մասնակցությանն առնչվող, որոնք կցանկանայիք հրապարակել մեր թերթում:**

– Ռուս պատմաբանների հետ միասին ժողովածու ենք պատրաստել՝ «Հայերի մասնակցությունն Առաջին համաշխարհային պատերազմում», որն արդեն լույս է տեսել: Հնարավոր է, որ հավաքված փաստաթղթերում, որոնք տեղ չեն գտել ժողովածուում, Զանգեզուրին վերաբերող եւ հրապարակման արժանի նյութեր լինեն: Կարծում եմ՝ ժամանակի խնդիր է:

**– Առաջին համաշխարհային պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ կա՞ն Հայաստանում:**

– Նույնիսկ Ռուսաստանում նմանատիպ հուշարձաններ չկան, քանի որ կարծում են, որ այդ պատերազմը մոռացված է: Նման մոտեցումը հավանաբար պայմանավորված է նրանով, որ պատերազմին հաջորդեց հեղափոխությունը, ԽՍՀՄ կազմավորումը եւ այլն: Պետությունները այդ հարցով չեն զբաղվել, քանի որ ստեղծվել էր նոր իրավիճակ, դասակարգային նոր հարաբերություններ էին հաստատվել, եւ նրանք ուշադրություն չդարձրին այդ հարցին: Ներկայումս ե՛ւ Եվրոպայում, ե՛ւ Ռուսաստանում սկսել են մեծ ուշադրություն դարձնել այդ պատերազմին: Կալինինգրադում հուշարձան են տեղադրել, եւ մեկ հուշարձան էլ նախատեսվում է Մոսկվայում տեղադրել:

**– Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելու 100-ամյակի կապակցությամբ ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում հանրապետությունում:**

– Մեկնարկն արդեն տրված է, եւ կարծում եմ, որ առանձնակի շուքով պետք է նշվի: Պատրաստվում են հրապարակումներ, ցուցահանդեսներ, գիտաժողովներ: Պատմության ինստիտուտի, պետհամալսարանի պատմության ֆակուլտետի հետ համատեղ հոկտեմբերի սկզբին նախատեսում ենք անցկացնել կոնֆերանս: Հոկտեմբերի վերջին Վրաստանում, իսկ նոյեմբերին Երեւանում վրացիների հետ համատեղ կանցկացնենք ցուցահանդես՝ Առաջին համաշխարհային պատերազմին եւ Կովկասյան ռազմաճակատին առնչվող: Արդեն ունենք հայ-ֆրանսիական օնլայն փաստաթղթային ցուցահանդես, նոյեմբերին Երեւանում ֆրանսիացիների հետ կկազմակերպվի կոնֆերանս՝ մասնավորապես «Հայերի մասնակցությունն Արեւելյան լեգեոնում» թեմայով:

**– Կարծիք կա, որ 1930-ական թվականներին Առաջին աշխարհամարտի մասնակիցներին հետապնդել են:**

– Ուսումնասիրելով սպայակազմը՝ կարող եմ նշել, որ 1930-ական թվականներին նրանց մեծ մասը գլխատվել է:

**– Որքանո՞վ է հետաքրքրում Առաջին աշխարհամարտը գիտնականներին, ուսանողներին, առանձին անհատների:**

– Վերջին շրջանում շատերն են սկսել զբաղվել դրանով: Առաջին աշխարհամարտում հայերի մասնակցության մասին դոկտորական աշխատանքներ են գրել պատմաբաններ Կարեն Փահլեւանյանը, Ռուբեն Սահակյանը, հումանիտար օգնությունների ուսումնասիրությամբ է զբաղվում Ասյա Դարբինյանը: Քանի որ Առաջին աշխարհամարտն առնչվում է Հայոց ցեղասպանության հետ, շատերն են զբաղվում այդ թեմայով, բայց ավելի շատ դիտարկում են այդ կտրվածքով:

**– Մինչ այժմ այդ հարցը դիտարկել ենք Մեծ եղեռնի կտրվածքով: Դուք ի՞նչ կարծիքի եք, ինչպիսի՞ ընթացք պիտի ունենան հետագա աշխատանքները:**

– Շատ ցավալի է, որ այդ պատերազմը մեր ժողովրդի համար ծանր ու դժվարին էջ է բացել. Հայոց Մեծ եղեռնն Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքներից մեկն է: Այս տարի քննարկման թեմա է առավելապես հայերի մասնակցությունն աշխարհամարտում, որ բավականին մեծ է եղել, քանի որ նրանք ակնկալում էին անկախություն, Արեւմտյան Հայաստանի ազատագրում: Կարծում եմ՝ այդ համատեքստում մինչեւ 2018թ. կունենանք բավականաչափ հրապարակված նյութեր:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Գյուղատնտեսություն*

# Սյունիք. աշնանացանը ուշանում է

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

րաստ է:

**– Գյուղացու համար լուրջ խնդիր է ստացած բերքի մթերումը, հիմա շուկայում ինչքա՞ն է ցորենի միջին գինը, եւ դրա մթերում կատարվո՞ւմ է:**

– Շուկայում այս պահին ցորենի գինը 120-125 դրամ է, անցած տարի 140 դրամի շրջանակում էր, բայց, կարելի է ասել, մթերում չի կատարվում, ցորեն չեն ընդունում, պահանջարկ չկա…

**– Իսկ միրգ ու բանջարեղեն ընդունողներ կա՞ն:**

– Եթե կազմակերպված մթերման մասին է խոսքը, բանջարեղեն որոշ չափով բանակն է մթերում, դա էլ մրցութային կարգով է՝ ըստ պայմանագրերի՝ կարտոֆիլ, կաղամբ, բազուկ, գազար: Դրանից բացի, այսօր հիմնականում գյուղացին ինքն է իր միրգն ու բանջարեղենը տանում շուկա:

**– Իսկ մարզի պահածոների գործարանները՝ Շամբի, Կապանի, Մեղրու, մթերում իրականացնո՞ւմ են…**

– Շամբն ինքն իր համար մշակած տարածքներից է հիմնականում բերք ստանում, որոշ չափով պտուղ եւ կաղամբ է մթերում: Կապանում ու Մեղրիում էլ առանձնապես մթերումներ չկան:

**– Պարո՛ն Թանգյան, մարզում հողագործներին հատկացված սերմացուի գումարների հավաքման գործում խնդիրներ կային, ի՞նչ պատկեր ունեք հիմա, շարունակո՞ւմ եք կիրառել դատարանի միջոցով դրանք գանձելու գործելածեւը:**

– Այս պահի դրությամբ նախորդ տարի տրված ցորենի սերմացուի համար 23 մլն դրամ գումար ունենք հավաքելու, դատարանում նման բազմաթիվ գործեր կան: Փորձը ցույց է տալիս, որ պարտաճանաչ մարդիկ վճարում են: Այդ գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ պայմանագրով: Սերմացուն տալիս ենք գյուղացուն, եւ նա պարտավորվում է, օրինակ, 2013-ին տրված սերմի համար վճարել մինչեւ 2014-ի հոկտեմբերի 10-ը, 1 կգ-ի արժեքը 160 դրամ է: Այսինքն՝ կառավարությունը հնարավորություն է տալիս, որ նա բերքը ստանա, հնձի եւ նոր միայն ստացած եկամուտներից սերմի արժեքը վճարի: Կարծում եմ՝ անպարտաճանաչ մարդիկ են, որ չեն վճարում:

**– Բայց գյուղացին եւ շատ մասնագետներ էլ պնդում են, որ պայմանագրում պետք է նախատեսվեր ֆորս մաժորի հանգամանքը, որն առկա է լինում ցանկացած նման պայմանագրում. ի՞նչ անի գյուղացին բնական աղետների, կլիմայի անակնկալների դեպքում, երբ բերքը փչանում է, եւ եկամուտ չի կարողանում ստանալ: Գյուղացին ստիպված վերցնում է համեմատաբար էժան սերմացուն, բայց բնությունն անակնկալներ է մատուցում: Այս հարցը, որ հուզում է հողի մշակին, համապատասխան տեղերում բարձրացվե՞լ է:**

– Դե, գիտեք, պայմանագրի ձեւը մշակողը մարզպետարանը չէ, բայց գյուղացին նախապես գիտի, որ դրանում ֆորս մաժորի մասին կետ չկա եւ ստորագրում է… Գիտեն, որ բոլոր դեպքերում պետք է վերցրած սերմի գումարը վճարեն: Մեղքը բարդել կարկուտի, երաշտի վրա… Նույնկերպ կարող են իբրեւ պատճառ նշել օդի հարաբերական խոնավությունը… Ամեն դեպքում, անպարտաճանաչ մարդկանց գործերը կքննի դատարանը, կզիջեն այնտեղ պարտքերը, թե չեն զիջի, օրենքի պահապանների գործն է:

**– Պարո՛ն Թանգյան, ժամանակին Ձեր ստորագրությունն էր դրվել հայ-իրանական միջպետական արձանագրությունների տակ, որոնցով Սյունիքի արոտավայրերը պիտի վարձակալության հանձնվեին իրանական կողմին, եւ որոնք հասարակական մեծ ընդվզում առաջացրին: Ի՞նչ եղավ այդ պայմանավորվածության ճակատագիրը:**

– Այդ արձանագրություններն այժմ կորցրել են իրենց ուժը, իրանական կողմից այդ մասին որեւէ խոսակցություն չկա, բողոք ու



առաջարկ էլ չկա: Ամեն դեպքում, այսօր առավել շահագրգռված ենք, որ տեղացիները գան ու արոտավայրեր վարձակալեն: Իսկ Սյունիքում հիմա բավականին ազատ ու չօգտագործվող արոտներ կան:

Դրանք, ըստ էության, ոչ թե պայմանագրեր էին, որ անպայման իրանական կողմից պետք է գային, այլ նախնական պայմանավորվածություն էր ու ոչ թե մեր, այլ իրենց առաջարկով. պետք է տեղում ուսումնասիրեին, եւ միայն տվյալ համայնքի համաձայնության դեպքում, օրենքի սահմաններում (մարզպետարանը վարձակալությամբ հող տալու իրավունք չունի), արոտներ վարձեին:

**– Ծրագրի կասեցման մեջ դեր ունեցա՞վ հասարակական բողոքի ու դժգոհությունների ալիքը:**

– Թե կոնկրետ ինչն էր հետագա անգործության պատճառը, չեմ կարող ասել, բայց պետք է նշել, որ այդ պայմանավորվածության համատեքստում, բացի արոտները վարձակալությամբ տալուց, նաեւ այլ դրական կետեր ենք ունեցել իրանական կողմի հետ՝ արդյունաբերության զարգացում, արտահանման առաջարկներ… Հիմա այդ ուղղությամբ էլ խոսակցություն չկա, եւ մեր բնակիչներն ինչքան ուզեն, կարող են արոտներ վարձակալել:

**– Իսկ որքա՞ն վարելահող կա մարզում եւ որքա՞նը չի մշակվում:**

– Այս պահին Սյունիքի 43 600 հա վարելահողից մշակվում է 34 000 հեկտարը:

Ասեմ, որ մշակվող հողերի չափը տարեցտարի ավելանում է, իսկ վարելահողերը, որ չեն մշակվում, էլի գյուղացին օգտագործում է, բայց իբրեւ խոտհարք. շատերը բարձրադիր գոտում են, եւ գյուղացու համար դժվար է դրանք մշակել: Իհարկե, կան եւ դեպքեր, երբ հողատերերը մեկնել են արտերկիր, բայց հողից էլ պաշտոնապես չեն հրաժարվել, եւ նրանց հողի հարկը կուտակվում է:

**– Գյուղացու համար լուրջ խնդիր է նաեւ անասնամթերումը, ինչպե՞ս է այն հիմա կատարվում:**

– Դա, իրոք, ցավոտ հարց է, հատկապես խոշոր եղջերավոր անասունների համար սպանդանոցներ են պետք, դրանք կօգնեն գյուղացուն: Մարզում հիմա խոշոր եղջերավոր անասունների, խոզի մթերում չկա: Գյուղացին ինքը անմիջական կապի մեջ է վաճառողի հետ, եւ ով ինչպես կարողանում, այնպես էլ կազմակերպում է այդ գործը: Իսկ մանր եղջերավորի մթերման հարցը Կապանում գործող ձեռնարկությունը որոշ չափով լուծում է, մթերում են տեղերում:

Սյունիքի մարզում սպանդանոցների կառուցման անհրաժեշտության մասին հարցը քանիցս բարձրացրել ենք գյուղնախարարի մոտ:

**– Սիսիանի տարածաշրջանից բողոքում են, որ մթերած մանր եղջերավորի գումարը Կապանի սպանդանոցը չի վճարել…**

– Դե գիտեք, շուկայական հարաբերություններ են, մենք ո՛չ գին որոշող ենք, ո՛չ առքուվաճառքին միջամտող, մարզպետարանն այդ լիազորությունը չունի: Պարզապես, եթե մեկը, օրինակ, շատ կաղամբ ունի իրացնելու, անկախ նրանից, ես ինչքանով եմ իրավասու, զանգում եւ ասում են՝ նկուղում փչանում է, մի բան արա: Շատերն են զանգում, թե՛ անասունի, թե՛ այլ մթերքի իրացման տարբեր հարցերով…

**– Մինչ գյուղացին իր անասունի մսի գնորդ է փնտրում եւ մթերման խնդիրներ կան, միսը ոչ թե էժանանում, այլ թանկանում է, ինչո՞ւ է այդպես ստացվում:**

– Դե, այս պահին թանկ է խոզի միսը, որովհետեւ գլխաքանակը նվազել է, խոշոր ու մանր եղջերավորի մսի գինը գրեթե նույնն է, ինչ նախորդ տարի: Գյուղացին, կարելի է ասել, միսը տալիս է ինքնարժեքով, մսագործը նրանից առավել շատ գումար է վաստակում:

**– Պարո՛ն Թանգյան, վերջերս մայրաքաղաքային մամուլում մեղադրանք հնչեց Ձեր վարչության որոշ աշխատողների՝ աշխատանքից անօրինական եւ ստիպողաբար ազատելու փաստերի մասին: Ինչպե՞ս են ազատվել այդ կադրերը եւ ինչո՞ւ:**

– Եթե խոսքը Գայանե Դավթյանի մասին է, նա հուլիսի 23-ին մայրաքաղաքում մասնակցել է քաղծառայության մրցույթի եւ չի հանձնել գրավոր թեստը: Իսկ Հրայր Հակոբյանն ազատվել է իր դիմումի համաձայն:

**– Ձեր ղեկավարած վարչության բնապահպանության բաժինը բազում բնապահպանական խնդիրներ ունեցող մեր մարզում պասիվ է, նրա «ձայնը չի լսվում». որքանո՞վ է այն կայացել, ի՞նչ լիազորություններ ունի:**

– Ես դրա աշխատանքում խնդիրներ չեմ տեսնում, այն կատարում է իր գործառույթները: Մենք ստուգումների, տույժ-տուգանքների, պատժելու լիազորություններ չունենք, ընդամենը պետք է եղած բողոքները, բնապահպանական խախտումների մասին ստացած ահազանգերը հասցնենք պետական բնապահպանական տեսչությանը: Առանձնապես մեծ լիազորություններ բաժինը չունի, որ գործնական քայլեր կատարի:

**– Ներկայումս Սյունիքում ի՞նչ խոշոր ծրագրեր են իրականացվում գյուղատնտեսության ոլորտում:**

– Այս պահին մարզում ՀՀ գյուղնախարարության կողմից եւ Համաշխարհային բանկի միջոցներով իրականացվում է ջրարբիացման ծրագիր, որը, բացի ջրարբիացման համակարգերի շինարարությունից, նախատեսում է նաեւ ծրագրում ընդգրկված համայնքներում արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծում եւ դրանց գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրում: Պարզապես տվյալ համայնքները ծրագրում պետք է 20 տոկոս համաներդրում անեն, որը որոշ գյուղերի համար դժվար է… Որոշ համայնքներում աշխատանքներն արդեն ավարտվել են, եւ դրա արդյունքում նոր գյուղտեխնիկա է մտել մարզ:

**– Կա՞ն մարզի գյուղատնտեսության ոլորտում ներդրում անել ցանկացող մարդիկ, որ կոնկրետ բիզնես-առաջարկով դիմեն մարզպետարան:**

– Չկան նման մարդիկ… Ներդնողները գյուղեր չեն մտնում. գյուղատնտեսական ամենամեծ շրջանը մարզում Սիսիանն է. այնքա՜ն ազատ անասնագոմեր կան այնտեղ, ոչ ոք դրանք օգտագործելու ցանկություն չի հայտնում:

**– Եվ վերջում, պարո՛ն Թանգյան, երբ Ռուսաստանի Դաշնությունը դադարեցրեց շատ երկրներից մթերքների ներկրումը եւ հայտարարեց, որ իր շուկան բաց է որոշ երկրների, այդ թվում եւ Հայաստանի համար, տեղի արտադրողների մեջ լավատեսություն մտավ, թե Հայաստանից արտահանումը կաճի. կա՞ որեւէ պետական հրահանգ, քաղաքականության փոփոխություն, որը ենթադրում է առավել զարկ տալ որոշ մթերքների արտադրությանը, արտահանմանը, ավելի շատ ցանել որոշ մշակաբույսեր, շահագրգռել տեղի արտադրողին ավելի շատ արտադրել՝ երաշխավորելով դրա իրացումն ու արտահանումը:**

– Դե մենք բոլոր դեպքերում էլ շահագրգռված ենք զարգացնել գյուղատնտեսությունը, զարկ տալ շատ ցանելուն, շատ արտադրելուն, բերքատվության բարձրացմանը, բայց կոնկրետ այդ համատեքստում որեւէ փոփոխություն պետական քաղաքականության մեջ չի եղել, թեեւ ՌԴ գյուղնախարարն առաջարկ է ներկայացրել ՀՀ գյուղնախարարին: Իրացման խնդիրը շուկան է թելադրում, ուստի պիտի հստակ պայմանավորվածություններ լինեն, որ գյուղացուն ասես՝ այսքան արտադրիր, այս գնով կգնեմ: Այս պահի դրությամբ վերադասից մարզերին որեւէ առաջարկ կամ հրահանգ չի եղել:

**ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

## Հացի տոն Սիսիանում

*Հացս փրփուր լավաշ ա,*
*Շեկլիկ ցորենի հաց ա,*
*Ուտողը չի կշտանա,*
*Մեր տնից չի հեռանա:*
*(Բռնակոթ գյուղում տարածված խաղիկներից)*

**«Սյունյաց երկիր» թերթի հանձնարարությամբ պետք է հոդված պատրաստեի Սիսիանում ավանդաբար կազմակերպվող հացի տոնի մասին: Չգիտեի, թե որտեղ պետք է այն անցկացվի: Բայց դա դժվար չէր իմանալ նույնիսկ առանց որեւէ մեկին հարցնելու: Հետեւեցի տոնական հագնված մի փոքր խմբի: Ընտանիք էր, երիտասարդ ընտանիք. հայրը, մայրը եւ իրենց երկու գեղեցիկ փոքրիկները: Նրանց հետ համարյա միաժամանակ մոտեցանք Ն.Ադոնցի վեհաշուք հուշարձանին: Հուշարձանի մոտ համերգային խումբ էր պատրաստվում ելույթի, իսկ Ադոնցի հուշարձանին ու նրա անունը կրող Սիսիանի պատմության թանգարանին հարող պուրակում, ծառերի տակ, հարուստ սեղաններ էին բացված: Միանգամից ասեմ, որ այս գեղեցիկ տոնի կազմակերպիչը թանգարանն է, իր հիմնադիր տնօրեն անխոնջ Ծովինար Պետրոսյանի գլխավորությամբ: Ծովինարին հեշտությամբ գտա: Չնայած մի քիչ «խառնված» էր, բայց ժամանակ գտավ, ինչպես ասում են, ոտի վրա ինձ ծանոթացնել ծրագրին: Իսկ ծրագիրն այսպիսին էր. մինչեւ հիմնական տոնակատարությունը սկսելը համերգով հանդես եկան Սիսիանի համայնքի մանկական արվեստի դպրոցի սաները (տնօրեն-պարուսույց՝ Արման Դավթյան, պարուսույցներ՝ Ռուզաննա Ղեւոնդյան, Լուսինե Հովհաննիսյան): Առաջ անցնելով ասեմ, որ հեռուստատեսությամբ, մասամբ էլ ռադիոյով հնչող ցածրորակ, հաճախ աղավաղված երգ ու պարի համապատկերի վրա համայնքային համույթը ցուցադրեց բարձրորակ համերգ:**

Եվ այսպես, հյուրերը Ծովինարի, նրա երիտասարդ օգնականների, թանգարանի պատանի բարեկամների օգնությամբ մեզ ծանոթացնում են թանգարանի հարուստ ցուցանմուշներին ու հետո հավաքվում թանգարանի մեծ սրահում: Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի հետ ներկաները տերունական աղոթքն են հնչեցնում, հետո սրբազանն օրհնում է այս տարվա ցորենի ալյուրից թխված հացը, ու հետո էստաֆետն անցնում է հանդիսության ամենափոքր մասնակիցներին՝ քաղաքի N1 նախակրթարանի չորս-հինգ տարեկան երեխաներին եւ Սահյանի հայրենի Լորի դպրոցի սաներին: Հնչում են մեծ բանաստեղծի, մտածողի, հայրենասերի՝ հողին, հողի մշակին ու հացին նվիրված բազմաթիվ գողտրիկ բանաստեղծություններ: Գալիս է հանդիսության հյուրերի հերթը: Միջոցառման շարունակությունը թանգարանի բակում է: Ողջունում են, շնորհավորում: Հյուրերի մեջ են Գորիսի Ակ.Բակունցի տուն-թանգարանին կից գործող «Միրհավ» գրական խմբակի սաները (ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու Թեհմինե Մարության), ովքեր կարդում են Ակ.Բակունց, Հ.Սահյան: Ինձ համար զարմանալի էր, նաեւ անչափ հաճե-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 12



*Անվանի գործիչներ*



**Հոր՝ Ռուբեն Թունյանի (ձախից), մոր՝ Սիրանուշ Դավթյանի (կենտրոնում) եւ եղբոր ու քույրերի հետ**

# Կյանք՝ նվիրված հայրենի եզերքին

*Ս[illegible] այդ արժանավորի մասին մի օր պիտի գրեինք, քանզի երկրավորի իր ճանապարհը դեռ երիտասարդ տարիներից դարձրել էր արարումի, ստեղծագործ աշխատանքի, հայրենի եզերքին անմնացորդ նվիրվելու ճանապարհ: Ի սկզբանե հաղթահարել էր իշխանավորի (պաշտոնյայի) ու շարքային հողեղեններիս միջեւ ընկած պատնեշն ու հասել մի ուխտատեղի, որ ավագների ու նախապետների ուխտատեղին է:*

*Այդ պայծառ անունը Մանուց Թեւոսյանն է, ով կարողացավ արդարացնել մի ամբողջ գյուղի ժողովրդի սպասելիքներն ու դառնալ այդ համայնքի երթի ջահակիրը:*

*Գորիսյան այդ գյուղի՝ Հարժիսի՝ մոտ երեք տասնամյակի ղեկավարի մասին տարիների հեռվից խոսք ասելն առաջին հայացքից միգուցե եւ անպատեհ համարվի, մեր խառնակ ժամանակներին ոչ համահունչ: Բայց դա միայն առաջին հայացքից:*

*Խորհրդային տարիների սոցիալ-տնտեսական հաջողությունները, հատկապես լեռնային միջավայրում գյուղապահպանության խնդրի յուրովի եւ հիմնավոր լուծումը մեծ մասամբ պայմանավորված էին հենց նման մարդկանց գործունեությամբ: Այնպես որ ղեկավարի նման տեսակն ընդօրինակման արժանի է առանձնապես մեր օրերում, մանավանդ որ փորձության են ենթարկվել ու ենթարկվում ազգային հիմնարար արժեքները, փոխվել ու փոխվում են ղեկավարին, իշխանավորին ներկայացվող բարոյական, մարդկային, գործարար, ինտելեկտուալ պահանջները:*

*Իհարկե, Մանուց Թեւոսյանն իր ժամանակի գործիչն էր՝ այդ օրերին բնորոշ ե՛ւ առավելություններով, ե՛ւ թերություններով: Իհարկե, ժամանակը, համակարգը հնարավորություն էին տալիս լուծել համայնքի առջեւ պատմականորեն ծառացած հիմնախնդիրների զգալի մասը: Իհարկե, նա պետք է քայլեր ժամանակին համահունչ, այլապես դուրս կմնար երթից: Բայց… Այդ ամենի հետ մեկտեղ նա կարողացավ վեր կանգնել ժամանակից, կարողացավ*



*գլխավորը, մնայունը, ազգայինը տարանջատել կուսակցական, առօրեական խնդիրներից, կարողացավ տեսնել գյուղապահպանության իրական ուղիները, տեսնել մարդուն, նեցուկ լինել ավանդականին, առաջավորին:*

*Եվ տարիներ շարունակ նա էր ճանաչելի դարձնում Հարժիսը, նրանով էին ճանաչում Հարժիսը, հարժիսեցուն:*

*Ու ամենեւին էլ զարմանալի չէ, որ մահվանից երեսունյոթ տարի անց ոչ միայն համագյուղացիները, այլեւ նրան ճանաչող գործիչներն ակնածանքով ու երախտագիտությամբ են հիշում Մանուց Թեւոսյան մարդուն ու գործչին:*

### Անցած ճանապարհը

Ծնվել է 1927թ. ապրիլի 10-ին Գորիսի շրջանի Հարժիս (նախկին Յայջի) գյուղում՝ Ներքի շենում: 1941թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է տեղի յոթնամյան: 1941-42 ուսումնական տարում սովորել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում, սակայն թողել է ուսումը եւ, ինչպես ինքն է նշել գրառումներից մեկում, «փոխարինել ռազմաճակատ մեկնած հորը՝ բազանդամ ընտանիքի գոյությունը պահելու համար» (ինքը բանակ չզորակոչվեց. 1927թ. ծնվածները Հայաստանում բանակ չզորակոչվեցին):

1942թ. ընդունվեց կոմերիտմիության շարքերը, 1943-46թթ. գլխավորեց գյուղի կոմերիտական կազմակերպությունը:

1945թ. մայիսին ընդունվեց կոմունիստական կուսակցության շարքերը՝ նախ՝ անդամության թեկնածու, մեկ տարի անց՝ անդամ:

1942-45թթ. աշխատել է տնտեսության հաշվետար, 1945-47թթ.՝ տնտեսության պահեստապետ, 1947-49թթ.՝ գյուղի կուսկազմակերպության քարտուղար:

Մանուց Թեւոսյանի կյանքում շրջադարձային էր կուսակցության Գորիսի շրջանային կազմակերպության 1948թ. հոկտեմբերի 19-ի կոնֆերանսը:

Կոնֆերանսի գործնական նախագահության 18 անդամների թվում նաեւ հարժիսեցի պատանին էր:

Կոնֆերանսն ընտրում է ՀԿ(բ)Կ 14-րդ համագումարի 9 պատգամավոր, որոնց թվում՝ Մանուց Թեւոսյանին: Համագումարը տեղի ունեցավ 1948թ. նոյեմբերի 12-14-ը:

1949թ. օգոստոսին 22-ամյա Մանուց Թեւոսյանն ընտրվում է գյուղի «Պրավդա» կոլտնտեսության վարչության նախագահ եւ այդ պաշտոնը վարում մինչեւ 1951թ. հոկտեմբերը:

1951թ. նոյեմբերից մինչեւ 1952թ. հունիս, կուսակցության Գորիսի շրջկոմի բյուրոյի որոշմամբ, գործուղվում է սովորելու կոլտնտեսությունների նախագահների պատրաստման միջնակարգ դպրոցում:

1952թ. հունիսի 3-ին ՀՍՍՀ գերագույն դատարանի քրեական կոլեգիայի որոշմամբ ազատազրկվում է երեք տարի ժամանակով՝ Գորիսի շրջանի Յայջի գյուղի կոլտնտեսության նախագահ եղած ժամանակ անասնագլխաքանակի վերաբերյալ ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելու համար: ԽՍՀՄ գերագույն սովետի նախագահության 1953թ. մարտի 27-ի հրամանագրով (համաներմամբ) ազատվում է կալանքից, որից հետո նրան թույլատրվում է ուսումը շարունակել կոլտնտեսության նախագահների պատրաստման միջնակարգ դպրոցում:

Թե ինչու է Մանուց Թեւոսյանը դատապարտվել եւ ենթարկվել կուսակցական պատասխանատվության, կանդրադառնանք քիչ հետո:

Երեւանի եռամյա դպրոցը 1954թ. հաջողությամբ ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ, աշխատել դաշտավարական բրիգադիր, ապա՝ գյուղսովետի գործկոմի նախագահ:

1959թ. փետրվարի 9-ին տեղի է ունենում գյուղի կուսակցական կազմակերպության դռնփակ ժողովը (կուսկազմակերպության քարտուղար՝ Ներսես Սահակյան), որը քննարկում է կոլվարչության մեկ տարվա հաշվետվությունը: Կոլտնտեսության նախագահը ժողովում լուրջ քննադատության է ենթարկվում: Իրավիճակի հետագա հանդուրժումն անթույլատրելի է համարում հատկապես գյուղի կուսակցական լիդեր Ներսես Սահակյանը: Նա առաջարկում է պաշտոնանկ անել Վոլոդյա Շափաղաթյանին եւ կոլտնտեսության նախագահ երաշխավորել Մանուց Թեւոսյանին, ով այդ ժամանակ գյուղսովետի գործկոմի նախագահն էր: Ըստ Ներսես Սահակյանի՝ «….Միայն նա կարող է ավելի լավ ղեկավարել մեր տնտեսությունը»: Եվ այդ առաջարկությունն ընդունվում է, թեեւ կոլվարչության մեկ տարվա աշխատանքը գնահատվում է բավարար:

Կուսակցական ժողովի առաջարկը մի քանի օր անց իրավական ձեւակերպում ստացավ: Մանուց Թեւոսյանը երկրորդ անգամ ընտրվեց կոլտնտեսության վարչության նախագահ՝ այդ պաշտոնում մնալով մինչեւ 1964թ.:

1960-ականների սկզբին երկրում իրականացվեցին մի շարք միջոցառումներ գյուղատնտեսության ղեկավարումը բարելավելու ուղղությամբ: Այդ միջոցառումներից մեկը տնտեսությունների խոշորացումն էր: Եվ Շինուհայրի, Հարժիսի, Խոտի, Հալիձորի երբեմնի տնտեսությունների բազայի վրա ստեղծվեց մեկ միասնական սովխոզ՝ Շինուհայրի սովխոզ: Դա 1964թ. մայիսի 14-ին էր: Տնտեսության առաջին եւ վերջին դիրեկտորը Սերյոժա Հայրապետյանն էր՝ Կոռնիձոր գյուղից, ավելի վաղ կոմերիտմիության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարն էր:

Հաջորդ օրը՝ մայիսի 15-ին, Մանուց Թեւոսյանն աշխատանքի է անցնում Շինուհայրի սովխոզում՝ կենտրոնական տեղամասի կառավարիչ:

Միացյալ տնտեսության գաղափարը, սակայն, շատ շուտով ձախողվեց: 1965թ. հունվարի 21-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի N27 կարգադրությամբ Յայջի եւ Հալիձոր գյուղերը հանվեցին Շինուհայրի սովխոզի կազմից, ու դրանց բազայի վրա ստեղծվեց Յայջիի սովխոզ (Հալիձորի տնտեսությունը Հարժիսից առանձնացավ 1977թ.): Մի քանի օր անց՝ 1965թ. հունվարի 27-ին, ՀՍՍՀ գյուղմթերքների արտադրության եւ մթերումների մինիստրության հրամանով Մանուց Թեւոսյանը նշանակվեց Յայջիի կաթնանասնապահական սովխոզի դիրեկտորի պաշտոնակատար, փետրվարի 1-ին՝ սովխոզի դիրեկտոր: Աշխատեց մինչեւ 1975թ. ապրիլի 2-ը: Սովխոզի դիրեկտորի պարտականություններից նրան ազատելու հանգամանքներին կանդրադառնանք լրացուցիչ:

Այդ ընթացքում Մանուց Թեւոսյանը սովորեց եւ 1971թ. ավարտեց Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտը՝ ստանալով գիտնական գյուղատնտեսի մասնագիտություն:

1975թ. մայիսից մինչեւ կյանքի վերջը Գորիսի մսամթերման գրասենյակի կառավարիչն էր:

Հանկարծամահ եղավ 1977թ. օգոստոսի 24-ին՝ 50 տարեկանում:

Հուղարկավորությունը տեղի ունեցավ օգոստոսի 26-ին: Աճյունը դրվել էր գյուղի մշակույթի տան դահլիճում: Հրաժեշտ տալու համար Հարժիս էին ժամանել ոչ միայն Գորիսից ու շրջանի գյուղերից, այլեւ հանրապետության ամենատարբեր վայրերից:

Մանուց Թեւոսյանը հողին հանձնվեց հայրենի գյուղում:

Մեկ տարի անց ճարտարապետ Սուրեն Նազարյանի նախագծով եւ Սարո անունն ճանաչված քանդակագործի ձեռամբ պատրաստվեց հուշաքար. բարձրահասակ, թիկնեղ, լայնալանջ (ինչպես կյանքում էր) Մանուց Թեւոսյանը՝ քարե բեկորը թիկունք դարձրած, տիրական հայացքով շարունակում է ներկա գտնվել հազարամյակների խորքից եկող գյուղի ընթացքին:

Ափսոս, սակայն, որ բուռն կյանքով լեցուն նրա հարժիսյան առանձնատանը հիմա ոչ ոք չի բնակվում:

### Ժամանակի առանձնահատկությունները

1931թ. ապրիլի 27-ի Զանգեզուրյան երկրաշարժը ճակատագրական եղավ Յայջի գյուղի համար, որն այդ ժամանակ գտնվում էր Որոտանի կիրճում (գիտական գրականության մեջ Որոտանի կիրճի այդ հատվածը կոչվում է Հարժիսի կիրճ, իսկ ներկայումս այդ վայրը տեղացիներս կոչում

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

## Անվանի գործիչներ


Հարժիս

# Կյանք՝ նվիրված հայրենի եզերքին

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

ենք նաեւ Ներքի շեն): Ճիշտ է, զոհեր չեղան (մի մանկահասակ երեխա էր այդ գիշեր գյուղում մահացել՝ հիվանդության պատճառով, Սեդրակ Գրիգորյանի որդին էր), բայց մի քանի շենքեր փլվեցին, գյուղի վերեւի ուղղաձիգ ժայռերից խոշոր քարաբեկորներ պոկվեցին ու գլորվեցին գյուղի ուղղությամբ:

Երկրաշարժի հետեւանքներին ծանոթանալու համար մի քանի օր անց Զանգեզուր ժամանեցին ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանն ու ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Ներկայիս գյուղատեղիից՝ լեռան բարձունքից, դիտեցին գյուղը, լսեցին տեղի ղեկավարների ինֆորմացիան, որոշվեց գյուղը կիրճից տեղափոխել վերեւի սարահարթ, մանավանդ որ նախկինում էլ գյուղն այնտեղ տեղափոխելու մտադրություն ունեին բնակիչները: Ոմանք նույնիսկ ժամանակին մարագներ էին կառուցել հանդում: Հողերն էլ՝ 1200ք/մ չափաբաժնով, տրված էին գյուղացիներին՝ իբրեւ խոտհարք կամ արոտավայր:

Հանդում մի թաղբանդ կար (մինչեւ հիմա պահպանվում է). տարեցներն ասում էին, որ այդ տարածքում (ներկայիս գյուղատեղիում) նախկինում եղած բնակավայրի եկեղեցին է դա: Խաչի գլխին էլ մի սրբատեղի կար՝ պատով շրջափակված (վերջին տարիներին այդ սրբատեղին վերականգնել է Բաբկեն Սամսոնյանը):

1931-ից սկսեց գյուղի աստիճանական տեղափոխումը վերեւի սարահարթ՝ ներկայիս տեղը: Այդ գործընթացն ավարտվեց 1937-ին: Վերջինը, որ Ներքի շենից տեղափոխվեցին նոր գյուղատեղի, Վահան Վարդանյանի ու Հակոբ Մարդյանի ընտանիքներն էին:

Նոր բնակավայրում, բնականաբար, սոցիալական ոչ մի ենթակառույց չկար: Ամեն ինչ պետք է ստեղծվեր, կառուցվեր սկզբից: Նախ՝ մի քանի ամսում Քահրիզից խմելու ջուրը հասցվեց գյուղ՝ քյունգերով: Այնուհետեւ կառուցվեց բնակելի չորս կորպուս՝ 40 ընտանիքի համար: Կառուցվեց նաեւ դպրոցի շենքը (1932-34թթ.):

Մի քանի տարի անց, սակայն, վրա հասավ Հայրենական մեծ պատերազմը (1941-45թթ.), եւ գյուղի տղամարդկանց հիմնական մասը՝ մոտ 200 հոգի, մեկնեց ռազմաճակատ:

Մեծ հայրենականի սարսափը հարժիսեցին տեսավ նաեւ այլ կերպ: 1941թ. օգոստոսին Թուրքիայից Հայաստանի տարածք ներխուժած մի ինքնաթիռ (թուրքական կամ գերմանական) ռմբակոծեց գյուղը: Յոթ ռումբ ընկավ գյուղի վրա՝ Իրիցաց թափայի հարավային լանջից մինչեւ ներկայիս ֆուտբոլի դաշտ ընկած տարածք (ռմբակոծության հետքերը 1970-ական թվականներին դեռ պահպանվում էին): Բարեբախտաբար զոհեր չեղան, վիրավորվեց մեկ երեխա: Իսկ գյուղացիները շատ արագ պատսպարվեցին Խաչին տակի քարատակերում՝ հնձվորը հանդը թողեց, կալվորը՝ կալը, անասնապահները՝ ոչխարի հոտն ու կովի նախիրը:

Նոր բնակավայրի հիմնախնդիրները գյուղական կյանքի օրակարգում էին ոչ միայն 1930-ականների վերջին, այլեւ հետագայում: 1940-ականների վերջին դրանց ավելացան հետպատերազմյան դժվարությունները: Հենց այդ հիմնախնդիրների աստիճանական լուծումն էլ ծառացել էր Յայջի գյուղի այդ ժամանակվա ղեկավարների առջեւ: Դրանց մի մասի լուծումը բաժին ընկավ Մանուկ Թեւոսյանին:

1968թ. հունիսի 9-ի երկրաշարժից հետո նոր խնդիրներ առաջացան գյուղում. վնասվել էր հատկապես գյուղի դպրոցը (ամիսներ անց դպրոցին կից փայտյա մասնաշենք կառուցվեց, հիմա այդ մասնաշենքում գործում է գյուղի մանկապարտեզը):


Մեծ հայրենականում զոհված հարժիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը


Հուշարձան Ֆիննական պատերազմում զոհված Խաչատուր Ներսիսյանին՝ կառուցված վերջին հրաժեշտի վայրում

### Հետադարձ հայացք. ուշագրավ գործեր

Պաշտոնավարման ընթացքում Մանուկ Թեւոսյանը եղավ մի շարք նախաձեռնությունների հեղինակ, որոնք կյանքի են կոչվել ու առայսօր ամբողջացնում են գյուղի դեմքն ու դիմագիծը: Դրանցից մի քանիսի մասին՝ ստորեւ:

Ներքի շենից հանդ բարձրանալուց հետո գյուղի առջեւ ծառացած առաջին խնդիրը խմելու ջրի մատակարարման ապահովումն էր: Նոր բնակավայրում չկար շատ թե քիչ նորմալ ջրաղբյուր: Եվ, ինչպես նշեցինք, 1931թ. խնդիրը մասնակիորեն լուծվել էր գյուղից 3-4կմ հեռավորության վրա գտնվող Քահրիզ անվանյալ վայրից ջուրը բերելով: Մանուկ Թեւոսյանի նախաձեռնությամբ նախ այդ ջրատարի քյունգերը (կավաշեն ջրատար խողովակներ) փոխարինվեցին մետաղյա խողովակներով՝ ջրի կորուստը կանխելու եւ մատակարարումն առավել ապահով դարձնելու նպատակով:

Խմելու ջրի հարժիսյան հիմնախնդիրը «Հայրենապատումի» մեջ (Գիրք Ա, էջ 347) հիշատակել է նաեւ Սերո Խանզադյանը. **«Հին բարակթել աղբյուրն է՝ փակի տակ, եւ ջուրը «նորմայով» է բաց թողնվում մարդկանց»:** Իսկ 1961թ. սեպտեմբերին, երբ գրողը հերթական անգամ այցելեց գյուղ եւ հանդիպեց կոլտնտեսության նախագահի Մանուկ Թեւոսյանին, վերջինս ասաց. **«Եթե հին գյուղի ջուրը հանենք վերեւ, մեր ծարավը կկոտրի, մեր հողի մի թիզը մի ոսկի կտա»:** Դա, իհարկե, ջրի խնդրի լուծման տարբերակներից մեկն էր միայն: Հետագայում նոր տարբերակներ ծնվեցին: Սուլուդարա անվանյալ վայրի աղբյուրի ջուրը հասցվեց գյուղ. դա 1960-ականների սկիզբն էր: Ապա Ակների ջուրը հասցվեց գյուղ (Գորիս քաղաքին սպասարկող գլխավոր ջրաղբյուրն էր), որն իսկապես պատմական իրադարձություն էր (1964-65թթ.): 1968-ին ջրագուրկ ժամանակներն արդեն հուշ էին: Եվ Սերո Խանզադյանը գրեց. **«Այժմ Հարժիսը խմելու ջուր ունի եւ ամբողջովին խնձորի այգիների մեջ է»:**

Մանուկ Թեւոսյանն իրոք մեծ տեղ էր տալիս հողագործությանն ու հատկապես այգեգործությանը: Նրա պաշտոնավարման ընթացքում սկիզբ դրվեց հողերի մելիորացմանը: Մելիորացվեց մոտ 600հա հող, որի մի մասը նախկինում լրիվ անօգտագործելի էր:

Հողերի բերքատվությունը հասցվեց աննախադեպ մակարդակի: Այդ ժամանակ էր, որ դաշտավարական բրիգադի ղեկավարներ Մխիթար Ջհանգիրյանն ու Սարգիս Համբարձումյանն արժանացան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի (հացահատիկի 1հա-ի բերքատվությունը հասել էր 28 ցենտների, ինչը չոռոգվող հողերի պարագայում բարձր ցուցանիշ էր):

Գյուղի մերձակայքում (Ծուվատեղի մոտ)՝ 15հա հողատարածքի վրա, հիմնվեց խնձորի այգի, որը, սակայն, նրա հեռանալուց հետո անուշադրության մատնվեց եւ, ի վերջո, չորացավ: Որոտանի կիրճում՝ Ալալար անվանյալ վայրում, մելիորացումից հետո նույնպես այգի հիմնվեց (ոռոգման ջուրը վերցնում էին թունելի Շտրեկ տեղամասից):

Մելիորացվել էր նաեւ Ալն թագավոր կոչվող վայրը, որտեղ նույնպես հետագայում ծառատունկ կատարվեց: Այդ տարածքը հիմնականում դարձավ բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքսի վայր՝ անօրինակ բարձր բերքատվությամբ (բանջարեղենի իրացումը մեծ հոգս էր դարձել տնտեսության համար):

Ընդլայնվեցին գյուղի՝ Որոտանի կիրճում գտնվող այգիները՝ Ներքի շեն, Ղուջի գոմեր, Ներքի ճաղաց, Թազա բաղ: Վերջին երեք այգիները, ցավոք, ավերվեցին հիմնովին. 1970թ. Շամբի ջրամբարի ժամանակավոր պատնեշը քանդվեց, մի քանի տարի անց քանդվեց Տոլորսի ջրամբարի պատնեշը, 1987-ին քանդվեց Սպանդարյանի ջրամբարի պատնեշը: Այդ վքարների հետեւանքով Որոտանի հունն ու ամբողջ ափեզրը տակնուվրա եղան: Հողի երեսից ջնջվեցին դարավոր այգիները: Անուղղելի վնաս կրեց գյուղի՝ 14-րդ դարում կառուցված եւ Հարժիսը Տաթեւի հետ կապող կամուրջը:

Խուբիսի Շենատեղ երբեմնի բնակատեղին նույնպես ծառայեցվեց բանջարաբոստանային բույսերի մշակմանը:

Անասնապահությամբ ու դաշտավարությամբ հռչակված գյուղը ճանաչվեց նաեւ այգեգործությամբ ու բանջարեղենի արտադրությամբ:

Մանուկ Թեւոսյանը նախաձեռնեց գյուղի արեւմտյան սարալանջին (Սվողի դոշ անվանյալ վայրում եւ դրանից դեպի հյուսիս՝ մինչեւ Ղամշու ձոր) անտառի հիմնումը: Նախաձեռնությունն արժանացավ անտառտնտեսության այդ օրերի ղեկավար Արամ Սեւլիկյանի հավանությանը: Տնտեսությունը հատկացրեց 120հա հողատարածք, որից 90հա-ի վրա տնկվեցին ոչ պտղատու ծառեր: 1971-74թթ. հիմնված անտառը ներկայումս գյուղին մի առանձին հմայք է տալիս

---



## Անվանի գործիչներ

(անտառի պահպանության գործում անգերազանցելի դերակատարություն ունեցան նախ՝ Պատվական Դավթյանը, ապա՝ Պարգեւ Բոզյանը, մինչեւ հիմա էլ գյուղում պահպանվում է անտառի յուրովի անվանումը՝ Պատոյի բաղ, թեեւ Պատվական Դավթյանը վաղուց չկա):

Մանուկ Թեւոսյանի պաշտոնավարման շրջանում նոր տեսք ստացավ գյուղն աշխարհին կապող ճանապարհը, եւ գյուղի ճանապարհները՝ առհասարակ: Նախ՝ վերջնական տեսքի բերվեց գյուղը Գորիս-Երեւան ավտոմայրուղուն կապող ճանապարհը (մինչեւ Հայրենական մեծ պատերազմ եւ պատերազմի ընթացքում գյուղից Գորիս ճանապարհն անցնում էր Մեծ թափայի կողքով, ապա՝ Շինուհայրի վարչական տարածքով ու Թոզ կապով): Առաջին եւ վերջին անգամ (1969-70թթ.) ասֆալտապատվեց Գորիս-Երեւան ավտոմայրուղուց մինչեւ գյուղի կենտրոն ձգվող ավտոճանապարհը՝ 7կմ երկարությամբ:

1962-63թթ. կառուցվեց Ներքի շենի ճանապարհը, որը, սակայն, հետխորհրդային առաջին տարիներին ինչ-որ մարդիկ փորձադաշտ դարձրին (շրջխորհրդի պատգամավոր դառնալու մոլագար մրցավազքում իբր կամեցան նոր ճանապարհ կառուցել, բայց հին ճանապարհը շարքից հանեցին, նորն էլ չկառուցեցին):

Կառուցվեցին նաեւ միջդաշտային ճանապարհներ, որոնք գործում են մինչեւ հիմա:

Մանուկ Թեւոսյանի անմիջական նախաձեռնությամբ գյուղը հեռախոսաֆիկացվեց: Առաջին ավտոմատ հեռախոսակայանը Գորիսի շրջանում (քաղաքից հետո)՝ 200 համարով, տեղադրվեց Հարժիսում 1973թ. մարտին: Մեկ տարի հետո կայանն արդիականացվեց (ավտոմատ հեռախոսակայանի առաջին տեխնիկը Հենրիկ Ադամյանն էր):

Շնորհիվ Տաթեւէկի շինարարության՝ 1958-ից սկսած, գրեթե լուծվել էր բնակչության, հատկապես տղամարդկանց զբաղվածության հարցը: Մինչեւ 40 մարդ բեռնատար մեքենայով ամեն օր աշխատանքի էր մեկնում Շինուհայր, Շտրեկ կամ Խոտի օրվա կարգավորիչ ջրամբար:

1970-ականների սկզբին, երբ Տաթեւէկի կառույցներում այլեւս աշխատուժի պահանջարկ չկար, Մանուկ Թեւոսյանը մեկ այլ երեւելի հարժիսեցու՝ Վաղարշակ Ղազարյանի հետ (վերջինս Գորիսի «Միկրոշարժիչ» գործարանի տնօրենն էր), նախագիծ կազմեց գյուղում «Միկրոշարժիչ» գործարանի մասնաճյուղ կառուցելու համար: Այդ նպատակով 1970-71թթ. գյուղ հրավիրեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին, ով գյուղ ժամանեց մի խումբ գիտնականների ուղեկցությամբ: Ծրագիրը, ի վերջո, կյանքի կոչվեց, ավելի ուշ դրա հիմքի վրա ստեղծվեց պահածոների խոշոր գործարան, որը, սակայն, անգործության մատնվեց, թեեւ տեղական հումքի անսպառ բազայի պարագայում այդ ձեռնարկությունը պետք է որ աշխատեր:

Մանուկ Թեւոսյանի ներդրումը նկատելի էր անասնապահության զարգացման ոլորտում: Նրա կառավարման շրջանում Հարժիսը՝ որպես կաթնաանասնապահական տնտեսություն, Գորիսի շրջանի երրորդ տնտեսությունն էր, իսկ դաշտավարության որոշ ուղղություններում՝ առաջատարը (օրինակ՝ կորնգանի սերմարտադրության ոլորտում): Ոչ միայն ավելացավ անասնագլխաքանակը, ոչ միայն նոր անասնաշենքեր կառուցվեցին, այլեւ բարձրացավ անասնապահության արդյունավետությունն ու շահութաբերությունը, ինչի համար տնտեսության մի շարք աշխատողներ արժանացան ԽՍՀՄ բարձր պարգեւների, իսկ Գրետա Թունյանը Շինուհայրի N213 ընտրական օկրուգից ընտրվեց ՀՍՍՀ 8-րդ գումարման գերագույն սովետի դեպուտատ (1971-76թթ.):

Խոշոր եղջերավոր անասունների պահպանությունն ու խնամքն արդյունաբերական ռելսերի վրա տեղափոխելու վերաբերյալ նա ծրագրել էր անասնապահական խոշոր համալիրներ կառուցել Քաշկառներ կոչվող վայրում: Այդ ծրագիրն էլ, ցավոք, իրականացվեց միայն նրանից հետո: Ի դեպ, ամենաարդիական պահանջներին համապատասխանող երեք համալիրից երկուսը դաժան ասպատակության ենթարկվեց հետխորհրդային առաջին տարիներին. գյուղի այդ օրերի ղեկավարներն անձամբ էին գլխավորում կողոպուտը: Հիմա այդ համալիրների հետքերն են միայն երեւում:

Մանուկ Թեւոսյանի ղեկավարման շրջանում իսկական հեղաշրջում տեղի ունեցավ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ոլորտում: Լծկան եզներով աշխատող սայլերին ու հերկող սարքերին փոխարինեցին մեքենան ու տրակտորը՝ գութանով եւ շարքացանով: Հնձվորին ու մանգաղին փոխարինելու եկավ հացահատիկահավաք կոմբայնը: Անասնապահական ֆերմաներում մեքենայացվեց աղբահանությունը, տեղադրվեցին խմոցներ, առաջին քայլերն արվեցին կթի մեքենայացման ուղղությամբ:

Ընդ որում՝ բոլոր այդ աշխատանքները կատարվում էին ոչ միայն Հարժիսում, այլեւ սովխոզի մեջ մտնող մյուս համայնքում եւս՝ Հալիձորում:

Հարժիսն ամբողջ հանրապետությունում հռչակված էր բարձրորակ (գրեթե բացառիկ որակով) մեղրի արտադրությամբ. տնտեսության այդ ճյուղը եւս նոր մակարդակի հասցվեց:

Հիմնվեց թռչնաբուծական խոշոր ֆերմա:

Այդ տարիներին որոշակիորեն բարելավվեց գյուղի կենցաղը, առաջին անգամ լուսավորվեցին փողոցները, կազմակերպվեցին կենցաղային մի քանի ծառայություններ, կառուցվեցին սպասարկման նոր օբյեկտներ:

1968թ. ավարտվեց գյուղի մշակույթի տան կառուցումը, որն ավելի վաղ էր սկսվել: Ի դեպ, մշակույթի տունը ճարտարապետական առումով այսօր էլ բացառիկ է Գորիսի ամբողջ շրջանում:

1970-ականների սկզբին այդ շենքում ակումբի փոխարեն կազմակերպվեց կուլտուրայի տուն՝ կինոդահլիճով ու ստացիոնար կինոկետով, հարուստ գրադարանով: Գրադարանի վարիչը, նաեւ կինոմեխանիկը Վոլոդյա Գրիգորյանն էր. մեծ է այդ անձնավորության դերը Հարժիսի մշակութային պատմության մեջ: Նաեւ նրա շնորհիվ էր, որ գյուղի թատերական խումբը մեծ համբավ ձեռք բերեց շրջանում:

Մանուկ Թեւոսյանն իր անձնական նախաձեռնությամբ գյուղ էր հրավիրում ժամանակի ամենաճանաչված համույթներին ու կատարողներին: Տարեց հարժիսեցիները հիշում են ՀՍՍՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ժողգործիքների անսամբլի (Արամ Մերանգուլյանի գլխավորությամբ) ելույթը, երգչուհի Արաքսյա Գյուլզադյանի մենահամերգը, ՀՍՍՀ եւ ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ, ասմունքի արվեստի նշանավոր ներկայացուցիչ Սուրեն Քոչարյանի ասմունքի երեկոն, Հայաստանի կամերային անսամբլի ելույթը՝ գլխավորությամբ մեր համագյուղացի, նշանավոր ջութակահար, ալտահար եւ դիրիժոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Զարեհ Սահակյանցի: Ինչպես նաեւ Գուսան Աշոտի համերգները, Սերո Խանզադյանի, Սուրեն Այվազյանի, Գարեգին Սեւունցի մասնակցությամբ գրական երեկոները…

Մարզական աշխարհի մեծ բարեկամն էր: Նրա նոթատետրում բազմաթիվ գրառումների հանդիպեցինք «Արարատ» ֆուտբոլային թիմին առնչվող: Ֆուտբոլի հանդեպ ունեցած սերն էր, որ գյուղում կառուցեց պարզ տիպի ֆուտբոլի դաշտ, կազմակերպեց ֆուտբոլի թիմ, որն Արտուր Առուստամյանի գլխավորությամբ առաջատարներից էր շրջանի համանման թիմերի շարքում: Ընդհանրապես շատ էր կարեւորում երիտասարդության ֆիզիկական դաստիարակությունը: Մինչեւ հիմա համագյուղացիները հիշում են գյուղի ըմբիշների խմբակն ու թիմը (մարզիչ՝ Ցոլակ Հարությունյան):

Օրակարգում էր 1932-34թթ. գյուղում կառուցված դպրոցը նորով փոխարինելու հարցը, մանավանդ որ այն տուժել էր 1968թ. հունիսի 9-ի երկրաշարժից: 1973-74 ուսումնական տարին սկսվեց նորակառույց դպրոցական շենքում (տնօրեն՝ Գեւորգ Վարդանյան):

Այդ տարիներին կառուցվեցին ճաշարանի, խանութի, գյուղապետարանի նոր շենքերը:

1966թ. նրա նախաձեռնությամբ եւ բոլոր համագյուղացիների ֆինանսական աջակցությամբ կառուցվեց հուշարձան, որով եւ հավերժացվեց Մեծ հայրենականում զոհված հարժիսեցիների հիշատակը. այդ պատերազմում զոհվել էր 99 (ըստ մեկ այլ աղբյուրի՝ 106) հարժիսեցի: Հուշարձանի կառուցմանն ակտիվ մասնակցություն ունեցան երեւանաբնակ հարժիսեցիները. մայրաքաղաքում աշխատանքները համակարգում էր Հակոբ Արմենակի Գրիգորյանը: Նախագիծն էլ կազմվել է նրա նախաձեռնությամբ:

Մանուկ Թեւոսյանին մտահոգել էր նաեւ գյուղի պատմական անունը վերականգնելու խնդիրը: ՀՍՍՀ գերագույն սովետի նախագահության 1968թ. հուլիսի 3-ի «Հայկական ՍՍՀ մի շարք բնակավայրեր վերանվանելու մասին» հրամանագրով Յայջի գյուղը վերանվանվեց Հարժիս գյուղ:

### Անազատություն եւ ռեաբիլիտացիա

Մանուկ Թեւոսյանն ակտիվ գործունեության ընթացքում մի քանի անգամ փորձության մեջ հայտնվեց: Դիպվածներից մեկի մասին, որ առայսօր հարցերի տեղիք է տալիս, ստորեւ:

1949-51 թվականներին, երբ Յայջի կոլտնտեսության նախագահն էր, որոշակի խնդիրներ առաջացան:

Նախ՝ 1950թ. մայիսի 28-ին հորդառատ անձրեւների հետեւանքով քանդվեց քարատակերից (քարանձավներից) մեկը, ինը գլուխ խոշոր եղջերավոր անասուն մնաց քարերի տակ:

Այնուհետեւ՝ 1949-50թթ. կոլտնտեսության խոշոր եղջերավոր անասունների պլանային առաջադրանքը կատարելու նպատակով կոնտրակտացիոն պայմանագրով գյուղացիներից գնեց 90 գլուխ խոշոր եղջերավոր: Բայց դրանք տվյալ պահին մուտք չարվեցին տնտեսություն եւ մնացին անասնատերերի մոտ, քանզի տնտեսությունը շենքային համապատասխան պայմաններ չուներ:

Կոնտրակտացիան՝ որպես պայմանագրի ձեւ, թույլ էր տալիս, որ դրանք մուտք արվեն պայմանագրով սահմանված ժամկետում: Եվ այդ թվերի հիման վրա հաշվետվություն ներկայացվեց շրջանային վիճակագրական բաժին, որի համաձայն տնտեսությունը կատարել է 700 գլուխ խոշոր ունենալու պլանային առաջադրանքը:

Գործարքը կատարվել է կոլտնտեսության ժողովի որոշմամբ, իսկ տնտեսության հաշվեկշիռը, հիմնված վիճակագրական տվյալների վրա, հաստատվել է շրջխորհրդի գործկոմում:

Գործարքը մինչեւ վերջ կատարելու համար տնտեսությունում առանձնացվել էր 230ց ցորեն:

Մեկ այլ խնդիր եւս. կոլտնտեսության նախագահն այդ ընթացքում, առանց կոլտնտեսության ժողովի որոշման, Գորիսի հրշեջ ծառայության աշխատակիցներին է տվել 968 ռուբլու մթերք (հաց, յուղ, պանիր, մեղր, կարտոֆիլ, միս)՝ վճարը հետագայում գանձելու պայմանով:

Ե՛վ գնվող անասունների մուտքագրումը, ե՛ւ հրշեջներին տրված մթերքների վճարի գանձումը ժամանակի խնդիր էին:

Սակայն Մանուկ Թեւոսյանն այդ ժամանակն արդեն չուներ: Նախ՝ 1950թ. հունվարի 5-ից մայիսի 30-ը գործուղվում է Երեւան՝ մասնակցելու վերապատրաստման վեցամսյա դասընթացների, ապա՝ 1951թ. հոկտեմբերի 30-ին, կուսակցության Գորիսի շրջկոմի բյուրոյի որոշմամբ, ուղարկվում է կոլխոզնախագահների պատրաստման եռամյա դպրոց:

Մինչ այդ հասցրել էր գնված անասուններից տնտեսություն մուտքագրել միայն 34 գլուխ, մնացյալը, ըստ Մանուկ Թեւոսյանի բացատրության, տվյալ պահին պիտանի չի եղել հանրային հոտի համար:

Մանուկ Թեւոսյանին փոխարինած նախագահը կարող էր եւ պարտավոր էր վերոնշյալ պայմանավորվածությունները հասցնել տրամաբանական ավարտին: Բայց նա չգնաց այդ ճանապարհով: Ավելին, այդ նպատակով նախկինում առանձնացված միջոցները ծախսվեցին այլ ուղղությամբ: Տնտեսության հանձնման-ընդունման ժամանակ այդ ամենը ձեւակերպվեց իբրեւ պակասորդ, որն էլ, բնականաբար, արժանացավ իրավապահների ուշադրությանը: Հարուցվում է քրեական գործ քրեական օրենսգրքի 135 հոդվածի հատկանիշներով:

1952թ. հունիսի 3-ին Սիսիանում, դռնբաց դատական նիստում, քննության է առնվում Յայջիի կոլտնտեսության գործը: Մանուկ Թեւոսյանից բացի՝ որպես մեղադրյալ ընդգրկված էին նաեւ տնտեսության հաշվապահ Համբարձում Ասատրյանը, ֆերմայի վարիչ Հակոբ Հովհաննիսյանը:

ՀՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան այդ օրը Մանուկ Թեւոսյանին, Համբարձում Ասատրյանին եւ Հակոբ Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչում քրեական օրենսգրքի 135 հոդվածով նախատեսված հանցանքը կատարելու մեջ եւ ենթարկում պատասխանատվության՝ Մանուկ Թեւոսյանին եւ Համբարձում Ասատրյանին՝ երեք տարի, Հակոբ Հովհաննիսյանին՝ երկու տարի ժամանակով ազատազրկման: Դատարանի դահլիճում նրանց կալանավորում են եւ տեղափոխում Գորիսի բանտ, որտեղ մոտ մեկ ամիս պահելուց հետո տեղափոխում են Քաջարանի ուղղիչ աշխատանքային գաղութ:

Դատավճիռը վերջնական էր եւ բեկման ենթակա չէր, թեեւ Մանուկ Թեւոսյանը մինչեւ վերջ իր մեղքը չընդունեց: Նա կալանքը կրեց ինը ամիս եւ քսան օր:

Կալանքից ազատվեց համաներման մասին ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահության 1953թ. մարտի 27-ի հրամանագրով: Եվ վերադարձավ կոլխոզնախագահների պատրաստման եռամյա դպրոց՝ շարունակելու ուսումը:

Հետաքրքիր է, որ այդ ընթացքում չէր քննարկվել Մանուկ Թեւոսյանի կուսակցական պատասխանատվության հարցը, որն այդ ժամանակներում արտառոց երեւույթ էր:

1953թ. ապրիլի 15-ին, «Մի խումբ պարտանդամներ» ստորագրությամբ, Երեւան քաղաքի Ստալինյան շրջկոմի քարտուղարի անունով նամակ է ստացվում: Ըստ այդ անոնիմկայի՝ անազատության մեջ գտնվող Մանուկ Թեւոսյանի կուսակցական հարցը չէր քննարկվել, դատվելուց հետո կուսակցական տոմսը նա չէր հանձնել կուսակցական մարմիններին, անդամավճար չէր մուծել…

Մինչդեռ՝ Մանուկ Թեւոսյանի կուսակցական տոմսը տասը ամսվա ընթացքում իր մոտ էր պահել կուրսընկեր, կուրսի կուսկազմակերպության քարտուղար Բագրատ Խաչատրյանը՝ Եղեգնաձորի շրջանի Գետափ գյուղից, ով էլ կանոնավոր վճարել էր կուսակցական անդամավճարը:

Անանուն նամակն ուղարկվում է կոլխոզնախագահների պատրաստման եռամյա դպրոցի սկզբնական կուսկազմակերպություն, որտեղ էլ 1953թ. ապրիլի 27-ին քննարկվում է Մանուկ Թեւոսյանի հարցը: Արձանագրվում է նախ, որ նրա կուսակցական հարցը չի քննարկվել դպրոցի կուսկազմակերպությունում, քանզի կազմակերպության տրամադրության տակ չի եղել դատարանի վճիռը: Կուսակցական ժողովն իր հերթին արձանագրում է Մանուկ Թեւոսյանի օրինախախտումները՝ նշված դատավճռում, բայց նկատի է ունենում մի շարք հանգամանքներ՝ հօգուտ նրա: Եվ հայտարարվում է նկատողություն:

Հայկոմկուսի Երեւան քաղաքի Ստալինյան շրջկոմի բյուրոն 1953թ. մայիսի 5-ին, սակայն, խստացնում է պատիժը՝ հայտարարելով խիստ նկատողություն՝ գրանցելով հաշվառման քարտում:

Մեկ տարի անց՝ 1954թ. ապրիլի 22-ին, Մանուկ Թեւոսյանը դիմում է միջնակարգ դպրոցի կուսկազմակերպությանը՝ խնդրելով վերացնել կուսակցական տույժը: Սկզբնական կուսկազմակերպության համաձայնությունից հետո (28.05.54թ.) հարցը

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8


Հարժիսի մշակույթի տունը

Անվանի գործիչներ

# Կյանք՝ նվիրված հայրենի եզերքին

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 7

քննարկվում է Ստալինյան շրջկոմի բյուրոյում (15.06.1954թ.), որն էլ հանում է տույժը: Դրանով, փաստորեն, ավարտվում է Մանուց Թեւոսյանի իրավական եւ քաղաքական ռեաբիլիտացիայի գործընթացը:

1954թ. Մանուց Թեւոսյանն ավարտում է կոլխոզնախագահների պատրաստման դպրոցը եւ ընդունվում Երեւանի գյուղինստիտուտ, բայց սովորում եւ ավարտում է տարիներ անց:

Կուսակցության տեղական կազմակերպությունների պահանջով նա վերադառնում է հայրենի գյուղ եւ շարունակում աշխատել այնտեղ:

## Եվս մի փորձություն, որ բախտորոշ եղավ

1974թ. Մանուց Թեւոսյանի մոտ առաջացան առողջական խնդիրներ. այդ տարվա նոյեմբերից մինչեւ 1975թ. ապրիլ նա պառկեց Գորիսի շրջանային հիվանդանոցում, մի քանի անգամ բժշկական ստուգումների ենթարկվեց Երեւանում:

Եղանակային անբարենպաստ պայմանները (1973 եւ 1974 թվականները եղանակային առումով խիստ անբարենպաստ էին), տնտեսության ղեկավարումից դիրեկտորի՝ մոտ հինգ ամիս կտրված լինելը պատճառ դարձան, որ Հարժիսի սովխոզը 1973 եւ 1974 թվականներին աշխատի վնասով: Իմիջիայլոց, Հարժիսի սովխոզի գոյության ընթացքում՝ 1965-ից ի վեր, սովխոզն աշխատել է բացառապես շահույթով եւ պլանային բոլոր առաջադրանքների կատարմամբ:

Եվ այն ժամանակ, երբ Մանուց Թեւոսյանը հիվանդանոցում էր, ձեռնարկվում է սովխոզի ֆինանսատնտեսական գործունեության ստուգում, որն իրականացնում է հանրապետության գյուղնախարարության վերստուգիչ-վերահսկիչ վարչությունը: Ի հայտ են բերվում խախտումներ ու բացթողումներ: Եվ, ի վերջո, Մանուց Թեւոսյանին, առողջական վիճակից բխող դիմումի համաձայն, 1975թ. ապրիլի 2-ին ազատում են Հարժիսի սովխոզի դիրեկտորի պարտականություններից (Գորիսի կուսշրջկոմի բյուրոյում հարցի քննարկումն անցնում է լարված մթնոլորտում, բյուրոյի անդամների մի մասը փորձում է կասեցնել դավադրությունը, բայց չի հաջողվում): Նրա պաշտոնանկությունը, սակայն, ձեւակերպվում է այլ կերպ՝ տնտեսության աշխատանքները ճիշտ չգլխավորելու համար:

Տեղի ունեցածը Հարժիսում որակում են դավադրություն եւ տեղական մասշտաբի հեղաշրջում, իսկ բարոյական տեսակետից՝ դատապարտելի երեւույթ, քանզի այդ ամենը կատարվեց հիվանդանոցում գտնվող մարդու թիկունքում եւ ստեղծված իրավիճակից օգտվել ցանկացող մարդկանց ձեռքերով:

Հիվանդանոցից հետո Մանուց Թեւոսյանը պայքարում է իր ազատման հրամանի աղավաղումը շտկելու համար: Դիմում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի գյուղատնտեսության հարցերով քարտուղար Վ.Ղալումյանին: Կուսակցության կենտկոմի միջամտությունից հետո՝ 1975թ. մայիսի 13-ին, հանրապետության գյուղնախարար Հենրիկ Թարջումանյանն արձակում է հրաման. «Ի փոփոխումն մինիստրության 1975թ. 31/3 N. 174/Կ հրամանի ընկ. Մանուց Ռուբենի Թեւոսյանին համարել ազատված Գորիսի շրջանի Հարժիսի սովխոզի դիրեկտորի պաշտոնից՝ հիվանդության պատճառով, համաձայն իր դիմումի»:

Եվ միայն դրանից հետո լուծվում է նրա աշխատանքի հարցը: 1975թ. մայիսին Մանուց Թեւոսյանը նշանակվում է Գորիսի մսամթերման գրասենյակի կառավարիչ՝ աշխատելով մինչեւ կյանքի ավարտը:

Ժամանակակիցները վկայում են, որ 1975թ. դավադրությունն ու հարժիսյան հեղաշրջումը ծանր տպավորություն էին թողել նրա վրա: Մինչեւ վերջ շարունակում էր մնալ կարծիքին, որ իր հետ անարդար են վարվել, որ ե՛ւ ստուգումները, ե՛ւ թերությունների բացահայտումը սովորական խարդավանքների դրսեւորումներ են եղել, իսկ ավելի ճիշտ՝ դավաճանություն եղել՝ կատարված իր թիկունքում, իր հիվանդության օրերին:

## Հայ մարդու նրա տեսակը

Շինարար ու ստեղծագործ Մանուց Թեւոսյանը մարդկային վեհ առաքինություններով օժտված անձնավորություն էր: Իր հոգու ներսում մի ամբողջ համայնքի հասարակություն էր ամփոփում, իր համագյուղացիների ամբողջական ու խտացված նկարագիրն էր կրում:

Հարահաս այդ մարդու դուռը բախում էին բոլոր գյուղացիները, ովքեր դժվար լուծելի խնդիր էին ունենում գյուղում, շրջկենտրոնում, մայրաքաղաքում:

Համագյուղացի հիվանդի սնարի մոտ առաջինն ինքն էր կանգնում եւ զորակցություն առաջարկում: Դժբախտության մեջ հայտնվածի դուռն ինքն էր առաջինը բացում եւ նեցուկ լինելու պատրաստակամություն հայտնում: Հանցանք գործած կամ զանցանք թույլ տված համագյուղացուն սատարելու համար ինքն էր իրավապահ մարմիններում երաշխավոր կանգնում:

Համագյուղացիներս հիշում ենք, որ Մանուց Թեւոսյանի օջախում միշտ էլ սուփրան բաց է եղել, որ ընտանիքը եւ հատկապես Սիրանուշ մայրիկը, ում ե՛ւ իրենք, ե՛ւ համագյուղացիները Ձիզի էին ասում, բացառիկ հյուրասեր եւ հարգալից էին: Դժվար թե շրջկենտրոնում կամ շրջանի գյուղերում գտնվեր մի ղեկավար, որ արժանացած չլիներ հարգամեծար Ձիզու հյուրասիրությանը:

Այդ օջախում ժամանակին հյուրընկալվել են Սուրեն Թովմասյանը, Անտոն Քոչինյանը, Շմավոն Առուշանյանը, Վիկտոր Համբարձումյանը, Հովհաննես Բաղդասարյանը (ՀԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար), Միեր Մելքոնյանը (ՀԿԿ կենտկոմի քարտուղար), մինիստրներ եւ, իհարկե, Սերո Խանզադյանը, Գուսան Աշոտը, Գարեգին Սեւունցը, Սուրեն Այվազյանը…

Նրա օգնությունը, աջակցությունն ու ողջամիտ խոսքն էին խնդրում նաեւ շատ ադրբեջանցիներ, ովքեր մեր ամառային արոտներում կամ Ադրբեջանի ձմեռանոցներում հայ անասնապահների հետ խնդիրներ էին ունենում:

Մեծ շրջապատի տեր էր, ինչի մասին տարիների հեռվից պատկերացում կարելի է կազմել նոթատետրում տեղ գտած հասցեներից, հեռախոսահամարներից:

Նույն այդ նոթատետրի տարբեր էջերում թեւավոր խոսքեր եւ իմաստուն մտքեր են՝ Խաչատուր Աբովյանից, Ֆիրդուսուց:

Սույն ակնարկը պատրաստելիս Մանուց Թեւոսյանի ժամանակակիցներից ու մերձավորներից շատերն ուշագրավ հուշեր պատմեցին եւ տարիների հեռվից գնահատեցին նրա գործունեությունը, մարդկային հատկանիշները: Այդ զրույցներից որոշ հատվածներ՝ ստորեւ:

**Բաղդասար Թեւոսյան (Մանուցի որդին).** «Աշխատանքին, գյուղին ամբողջովին նվիրված անձնավորություն էր: Ինքը գիտեր, որ ժամանակի կանչով է հայտնվել առաջին գծում, գիտեր, որ պատմական առաքելություն ունի: Անձնականը երկրորդ պլանի վրա էր: Վաղ առավոտյան էր աշխատանքի շտապում եւ ուշ էլ տուն էր վերադառնում: Ավելի շատ բեռ էր իր վրա վերցրել, քան կարելի էր: Իր ձեռքով ոչ ոք չի դատապարտվել, ընդհակառակը՝ նեցուկ էր կանգնում նեղության մեջ հայտնվածներին: Չափազանց մարդկային էր: Կարողանում էր տեսնել ու գնահատել աշխատող մարդուն: Սակայն կային մարդիկ, ովքեր անստորագիր նամակներով փորձում էին վարկաբեկել նրան, բայց գյուղի բնակչության մեծագույն մասը սիրում եւ գնահատում էր հորս»:

**Լավրենտ Սարգսյան, Սիսիանի քաղաքապետ (1998-2008թթ.)**. «Տաթեւի ՀԷԿ-ի շինարարությունում 1970-ականների սկզբին տեղամասի պետ էի, ապա՝ շինվարչության պետ: Տարիներ շարունակ եւ բազմիցս առնչություն եմ ունեցել նրա հետ: Գյուղի խնդիրները լուծելու նպատակով նաեւ Տաթեւի ՀԷԿ-ի շինարարների հնարավորություններն էր փորձում օգտագործել: Եվ շատ հարցեր էին լուծվում: Գյուղում բազմաթիվ երիտասարդներ աշխատանք չունեին: Տաթեւի ՀԷԿ-ի շինարարության ղեկավարության եւ նրա համատեղ որոշմամբ 30-40 մարդ էր գյուղից մասնակցում այդ շինարարությանը: Հիանալի մարդ էր… Նման մարդիկ՝ ընկերասեր, մարդկային վեհ հատկանիշներով ու առաքինությամբ, հիմա քիչ են: Մեծ հարգանք էր վայելում ոչ միայն գյուղում, այլեւ գյուղի ու շրջանի սահմաններից դուրս: Նրա խոսքին բոլորը հարգանքով էին վերաբերվում, ինքն էլ իր խոսքի տերն էր եւ հարգալից էր դիմացինի հանդեպ»:

**Մխիթար Հայրապետյան (1973-91թթ. Հարժիսի սովխոզի գյուղատնտես, ապա գլխավոր գյուղատնտես).** «Մանուց Թեւոսյանից ստացած առաջին դասը մարդ լինելու, մարդկանց օգտակար լինելու, դիմացինի հանդեպ (անկախ զբաղեցրած դիրքից) հարգալից լինելու, մարդկանց օգնելու հարցում պատրաստակամ լինելու դասն էր: Ընկերությունը նրա համար բարձր, անսակարկելի արժեք էր: Տիրապետում էր հրապարակախոսական արվեստին, գիտեր խոսքի արժեքը, խոսքով մարդկանց ոգեշնչել գիտեր: Մեծ հոգու եւ մեծ սրտի տեր էր, ներել գիտեր, մարդու դրության մեջ մտնել գիտեր: Մի խոսքով՝ պայծառ կերպար էր եւ ծանրակշիռ ներդրում ունեցավ մեր գյուղի զարգացման գործում»:

Մեր ձեռքի տակ են բազմաթիվ բնութագրեր՝ տարբեր ժամանակներում ու տարբեր առիթներով գրված եւ պետական արխիվում պահվող: Այդ բնութագրերից մի քանի քաղվածք կուզենայինք նույնպես ներկայացնել, որ հավելյալ լույս կսփռեր նրա կերպարի վրա:

**Գորիսի շրջանի ղեկավարության մահախոսականից («Զանգեզուր» թերթ, 27 օգոստոսի 1977թ.).** «…Ավելի քան տասը տարվա ընթացքում Մանուց Թեւոսյանն ուժերի անմնացորդ նվիրումով, տարիների փորձով ու խորը գիտելիքներով ակտիվորեն պայքարում էր սովխոզի տնտեսական ու կազմակերպական ամրապնդման, գյուղի կուլտուրական վերելքի ապահովման համար: Նրա ղեկավարման ընթացքում նկատելիորեն բարձրացան հողերի բերքատվությունը, անասունների մթերատվությունը, գյուղի բնակիչների տնտեսական ու կուլտուրական մակարդակը»:

**Կոլտնտեսության նախագահների պատրաստման միջնակարգ գյուղատնտեսական դպրոցի դիրեկտոր Ա.Մկրտչյան, կուսկազմակերպության քարտուղար Լ.Սիմոնյան (28 մայիսի 1954թ.).** «Սովորում է դպրոցի երրորդ կուրսում գերազանց առաջադիմությամբ: Կարգապահ ուսանող է, ակտիվորեն մասնակցում է դպրոցի հասարակական կյանքին»:

Մանուց Թեւոսյանի կրտսեր որդին՝ Ժիրայր Թեւոսյանը, գրեթե չի հիշում հորը, բայց պատմում է, որ իրեն ու եղբորը միշտ էլ հարգանքով ու պատկառանքով են վերաբերվել, երբ իմացել են, որ Մանուց Թեւոսյանի որդիներն են:

Մանուց Թեւոսյանը դեռեւս պատանեկան տարիներից եղել է ուշադրության կենտրոնում, գնահատվել ըստ պատշաճի:

Քսանմեկ տարեկանում՝ 1948 թվականին, ինչպես նշել ենք, լինելով Յայջիի կուսկազմակերպության քարտուղար՝ ընտրվել է Հայաստանի կոմկուսի 14-րդ համագումարի պատգամավոր (համագումարի ամենաերիտասարդ պատգամավորն էր):

Քսաներկու տարեկանում ընտրվել է Յայջիի կոլտնտեսության նախագահ (հանրապետության ամենաերիտասարդ նախագահն էր այդ ժամանակ):

1960-ականների սկզբին Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցել է Անդրկովկասյան երեք հանրապետության տնտեսական-կուսակցական ակտիվի՝ ԽՍՀՄ ղեկավար Նիկիտա Խրուշչովի նախագահությամբ անցկացված թբիլիսյան ժողովին:



9 հունիսի 1963թ., Ներքի շենի ճանապարհի կառուցման ժամանակ, ձախից՝ Սարգիս Համբարձումյան, Արփավազդ Ադամյան, Մանուց Թեւոսյան, Լազր Ալեքսանյան:



Ձախից՝ Մանուց Թեւոսյան, Վոլոդյա Շափաղաթյան, Ներսես Սահակյան



Անվանի գործիչներ

# Ջերմ ու բարի անուն

**Հարժիսեցի Մացոյի՝ Մնացական Թեւոսյան մարդու, ղեկավարի, գյուղմասնագետի կյանքն ու գործունեությունը ներկայացնող հապուկ հրապարակում, անշուշտ, արժե պատրաստել:**



Ողջունելի է, որ մեր երկրի անցյալին, մեր երեկվա օրվան ու մեր ծնողների ապրած կյանքին սկսում ենք մոտենալ ավելի սթափ, ավելի խոհուն, ավելի արժանապատվորեն: Ինչքան էլ փորձեր արվեն մռայլ գույներով ներկայացնել խորհրդային հասարակարգը, այնուհանդերձ ճշմարտությունն այն է, որ մեր ժողովրդի համար դրանք զարթոնքի եւ մեծ հաղթանակների տարիներ են եղել: Եթե ասենք միայն, որ Հայաստան աշխարհի ծաղկումն ու զարգացումը կապվում են հետպատերազմյան ընդամենը երեք-չորս տասնամյակի հետ, որ այդ ոչ մեծ ժամանակահատվածում գրեթե ոչնչից կառուցվել է մի հզոր երկիր՝ իր քաղաքներով ու գյուղերով, ժողովրդագրական անօրինակ զարգացմամբ, տնտեսության բոլոր բնագավառների աննախադեպ աճով, բարձր մշակույթով ու արվեստով, որ...

Ամեն մի ժամանակ իր հերոսներն է ծնում: Եթե հաղթանակներին չեն հաջորդում նոր հաղթանակներ եւ նոր զարգացումներ, ձեռքբերումները մեռնում կամ խամրում են…

Պատմության ու սերունդների համար կարեւոր եմ համարում երկրի կառուցման գործում իրենց ներդրումն ունեցած մարդկանց կերպարներն էքսհումել՝ քանի դեռ նրանք չեն մոռացվել, կան մարդկանց հիշողություններում:

«Սյունյաց երկիրը» հերթական շնորհակալ գործն է անում: Սուրեն Բակունցի մասին, եթե ճիշտ եմ հիշում, եղել է հատուկ համար: Ուրախությամբ կցանկանայի հանդիպել Գորիսի շրջանից՝ Լեռն Ջհանգիրյանին, Անդրանիկ Սրապյանին, Շամխալ Մանվելյանին, Միխայել Բաղդասարյանին, Սամսոն Արզումանյանին, Գառնիկ Հարությունյանին եւ գյուղատնտեսության բնագավառի էլի ուրիշ նվիրյալներին ներկայացնող թողարկումներ:

Հիմա ընկեր Մանուցի մասին: Եթե ասենք, որ պաշտոնական հարաբերությունների ընթացքում մարդկանց մեջ կարող է ծնվել համակրանքի մի ներքին զգացողություն, եւ մտերմությունը կարող է այլ՝ ընկերական հարթության վրա զարգանալ, ապա, չնայած տարիքային տարբերությանը, միմյանց հանդեպ մեր հարգանքն ու բարեկամությունն այդպիսին էին: Պատմեմ, թե ինչպես այն ստեղծվեց:

1972 թե՝ 73 թիվն էր: Կոմերիտմիության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար, կուսակցության շրջկոմի բյուրոյի անդամության թեկնածու էի: Բյուրոյի որոշմամբ Հարժիսի խորհրդային տնտեսությանը կցված անձը, որից պահանջվում էր վերահսկել բերքահավաքի ընթացքը եւ ծառացած խնդիրների լուծմանն օպերատիվ ընթացք տալ, ես դարձա:

Ծանոթ լինելով գյուղական կյանքին՝ գիտեի, որ բերքահավաքի օրերին գյուղում մարդկանց կարելի էր հանդիպել միայն վաղ առավոտյան: Ամռանը բոլորը դաշտում են, բնակավայրում մնում են միայն ծերերն ու երեխաները: Հանձնարարությունը ստանալու հաջորդ առավոտյան դեռ ժամը 8-ը չկար՝ Հարժիսում էի: Երբ մտա սովխոզի դիրեկտորի առանձնասենյակը, ընկ. Թեւոսյանը՝ Մանուցը, զարմացած ու անհանգստացած, ոտքի կանգնեց, բարեւեց ու ցածր ձայնով հարցրեց.

- Էս ինչ խաբար է, ի՞նչ է պատահել առավոտ ծեգին…

- Շրջկոմի բյուրոյի կողմից ես եմ կցված ձեր տնտեսությանը բերքահավաքի ընթացքում, - ասացի ու տեղավորվեցի դիմացի աթոռին:

Ընկեր Թեւոսյանը քմծիծաղ տվեց, ես էլ զգացի, որ այդքան վաղ մարդկանց հոգու վրա նստելը երեւի ջահելություն էր, բայց… Բայց փորձված ղեկավարն անմիջապես կողմնորոշվեց. հանձնարարեց շտապ հավաքել ճյուղերի վարիչներին: Չանցած 15-20 րոպե, բոլորը տեղում էին: Խորհրդակցությունը շատ կարճ տեւեց: Թեւոսյանը ներկայացրեց, որ շրջկոմի բյուրոյի որոշմամբ ես եմ բերքահավաքի համար պատասխանատու անձը, չմոռացավ ասել, որ շրջկոմի ներկայացուցիչը կարող է լույսը չբացված գյուղում լինել, իսկ շատերը դեռ քնած են, տվեց իր հանձնարարությունները, մի երկու հոգի խոսեցին պակաս-պռատից ու ցրվեցին:

- Կաշխատենք հուսախաբ չանել, - ասաց ընկեր Մանուցը, ում, կարծում եմ, դուր էր եկել առավոտ վաղ իմ գյուղ գնալը:

Դրանից հետո Հարժիսում լինում էի եթե ոչ ամեն շաբաթ, ապա գոնե ամսական մեկ-երկու անգամ: Մանուցի հետ աշխատելը հեշտ էր ու հաճելի: Նա գյուղատնտեսական աշխատանքների մեծ գիտակ էր: Լինելով շրջանի տարածքի ամենաբարձրադիր տնտեսության ղեկավար՝ խիստ կարեւորում էր կլիմայական առանձնահատկությունները, լավ գիտեր ցանքատարածությունների մշակմանն անհրաժեշտ պայմանները: Քանի որ Հարժիսի սովխոզի մի տեղամասն էլ Հալիձորն էր՝ փաստորեն առկա էր բազմաշերտ գոտիականություն՝ Որոտան գետի ափերից մինչեւ Եռաբլրի բարձրադիր հարթությունները: Նրան լավ ծանոթ էին տեղանքի ամեն կածան, քար ու թուփ: Տեսնել էր պետք նվիրումը, սերը հայրենի գյուղի նկատմամբ, սովխոզի բանվորների, ճյուղերի ղեկավարների հետ նրա աշխատանքի ոճը, համոզելու ու պահանջելու մեթոդները, համբերատարությունն ու զսպվածությունը:

Մանուցը խոսքաշեն, մեծ հումորի տեր, հետաքրքիր զրուցակից էր. կարելի էր նրա հետ ժամերով խոսել ու երբեք չձանձրանալ: Ամեն մի հանդիպում կյանքի, գյուղատնտեսական գործի իմացության մի դաս էր, սովորելու դաս:

Նա ընտանիքի հրաշալի հայր ու ամուսին էր: Երկար տարիներ շատ ծանր էր տանում կնոջ կորուստը:

Մի դեպք եւս վառ է մնացել իմ հիշողության մեջ: Տարեվերջ էր: Ինչ-որ որոշման կատարման շրջանակներում կուսակցության շրջկոմի պլենումում պետք է քննարկվեր աշնանացանի վիճակը: Պլենումից առաջ գյուղ գնացի ու ընկ. Թեւոսյանի հետ շրջեցի Եռաբլրի աշնանացանի դաշտերում: Դեռ ձյուն չէր նստել, ցանքատարածությունները լավ կանաչել ու բարձրացել էին: Տեսարանը տպավորիչ էր, Մանուցի տրամադրությունը՝ բարձր:

- Եկող տարի լավ բերք ենք ունենալու, - ասաց ու ավելացրեց - էստեղ ոչ մի գաղտնիք էլ չկա, պարզապես Եռաբլրում ցանքը պիտի արվի մինչեւ օգոստոսի 20-ը: Ուշ ցանված աշնանացանը չի հասցնում լավ արմատակալել ու չի դիմանում աշնան քամիներին ու ձմռան ցրտերին:

Շրջկոմ վերադառնալով՝ փորձեցի իմանալ, թե Հարժիսն ինչպե՞ս է ներկայացված զեկուցման մեջ, պահանջեցի, որ նշվի իբրեւ լավ օրինակ: Պլենումում հարցի քննարկման ընթացքում լուրջ խոսակցության նյութ դարձավ հարեւան տնտեսություններից մեկում այդ ուղղությամբ աշխատանքների անբավարար վիճակը: Շրջկոմի առաջին քարտուղար Արամ Հարությունյանը տեղից միջամտեց, թե ինչպես է, որ Հարժիսում, որտեղ ավելի անբարենպաստ են կլիմայական պայմանները, աշնանացանի այդպիսի ծածկույթ կա: Եվ չգիտես ինչու ասաց, որ հարցին թող պատասխանի շրջկոմից կցված անձը: (Հավանաբար նախորդ օրվա իմ պահանջը քարտուղարին զեկուցել էին):

Ես վեր կացա ու բառ առ բառ կրկնեցի Մանուցի խոսքը, որ Հարժիսում ցանքն արվում է խիստ գրաֆիկով՝ մինչեւ օգոստոսի 20-ը, ժամանակ է տրվում, որ ցրտերից ու ձյունից առաջ բույսն արմատակալի...

Պատասխանը դուր եկավ քարտուղարին: Ես անմիջապես ավելացրի, որ Թեւոսյանի աշակերտն եմ եւ ուրախ կլինեմ, եթե ուսուցիչս ինձ լավ աշակերտ ճանաչի: Դահլիճը ծիծաղեց...

Իմ հիշողություններում Մանուցը մի ջերմ ու բարի անուն է:

**ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ**
**Մոսկվա**

Մի քանի անգամ գործուղվել է Մոսկվա՝ մասնակցելու ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսին:

Պարբերաբար ընտրվել է Հայաստանի կոմկուսի Գորիսի շրջկոմի անդամ եւ Գորիսի շրջխորհրդի պատգամավոր:

## Գերդաստանը

Մանուց Թեւոսյանը սերում է Հարժիսի Լալունց գերդաստանից: Տոհմի նահապետը, ըստ գյուղում տարածված ավանդազրույցի, Յայջի է տեղափոխվել 19-րդ դարի առաջին կեսին Սիսիանի շրջանի Շենաթաղ գյուղից, ավելի ստույգ՝ Շենաթաղ եւ Լոր գյուղերի միջեւ գտնվող Մրոցից, որի ավերակներն են մնացել: Լորում մեզ ասում են, որ այդ վայրը հիմա էլ կոչվում է Յայջի. դա այդ վայրի՝ ավելի ուշ ժամանակներում ստացած անունն է, եւ դեռ պարզ չէ, թե կապ ունի՞ մեր գյուղի նախկին անվան հետ: Ըստ այդ վարկածի՝ Մրոցից է Յայջի տեղափոխվել նաեւ Լալայի եղբայրը՝ Էլդար անունով, ով նահապետն է հարժիսյան մեկ այլ՝ Պուղունց գերդաստանի: Լալան եւ Էլդարն ունեցել են մեկ եղբայր եւս, ով Մրոցից տեղափոխվել է Կապանի շրջանի Վերին Խոտանան, որտեղից էլ՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտ: Լալայի գերդաստանի մի ճյուղը մնացել է Շենաթաղում, այսօր էլ գերդաստանի շառավիղներն ապրում են այնտեղ: Այդ գերդաստանի դուստրն էր Համո Սահյանի մայրը՝ Գայանեն:

Գերդաստանը Շենաթաղ կամ Մրոց է եկել Պարսկաստանից՝ Թուրքմենչայի պայմանագրից հետո:

Տոհմի հաջորդը եղել է Բաղդասարը, ում որդին Մանուցն էր. վերջինս Յայջիի ամենանշանավոր քյոխվաներից էր եւ 1861 թվականին, երբ մահացավ, հուղարկավորվեց գյուղի՝ 1659թ. կառուցված Սբ Մինաս եկեղեցու մուտքին կից, ինչը հանգուցյալի հանդեպ մեծագույն հարգանքի եւ երախտագիտության արտահայտություն էր: Հենց նրա անունով էլ կոչվեց 1927 թվականին այդ օջախում լույս աշխարհ եկած զավակը՝ Մանուց Թեւոսյանը:

Մանուցի հայրը Ռուբեն Թունյանն էր (1906-93թթ.), մայրը՝ Սիրանուշ Դավթյանը (1906-90թթ.)՝ Տաթեւի Բալանունց տոհմից: Ռուբենի հայրը Թեւոսն էր, մայրը՝ Մարին՝ գյուղի Սուքիասենց գերդաստանից (Սուքիասի թոռ Գրիգորի դուստրը):

Ռուբենն ու Սիրանուշը, Մանուցից բացի, ունեցել են եւս մեկ որդի՝ Միհրան (1931թ.), չորս դուստր՝ Փնջիկ (1933թ.), Ամալյա (1936թ.), Ժենյա (1939թ.), Նաբաթ (1945թ.): Հիմա նրանցից ողջ են վերջին երեքը:

Միհրանը Գորիսի շրջանում ճանաչված քարագործ վարպետ էր, ինչի համար էլ 1980-ականներին արժանացավ Գորիսի պատվավոր քաղաքացու կոչման:

Բազմաշունչ այդ ընտանիքի սոցիալական վիճակի մասին 1936 թվականին առնչվող մի փոքրիկ գրառում ունի Սերո Խանզադյանը «Հայրենապատում»-ի մեջ (էջ՝ 347). **«Հիշում եմ, տասնյոթ տարի առաջ հանդից խոտ բերող հովիվ Օրբելն ասաց, - բա մեր բանը ո՞նց կլինի: Տասներեք «սունչ» մի կարճ «յաշիկի» մեջ: Բա սա տո՞ւն է, որ մեջը մենք ապրում ենք»:**

Այդ «մի կարճ «յաշիկ» բնակարանը» մինչեւ հիմա պահպանվում է, իսկ 1967 թվականին հայր ու որդի հին տան կողքին նոր տուն կառուցեցին:

Մանուց Թեւոսյանն ամուսնացավ 1946թ.: Ամուսնացավ համագյուղացի Սիրանի հետ (1927-69թթ.), ով Հակոբ Մարդյանի դուստրն էր: Վերջինս մեր գյուղի ճանաչված հյուսնն էր եւ սայլագործ վարպետը: Նրա ավագ որդին՝ Խաչատուրը (Ներսեսը), 1939թ. զոհվեց Ֆիննական պատերազմում: Հայրն էլ որդու հիշատակը հավերժացնելու համար գյուղից Գորիս ձգվող նախկին ճանապարհի եզրին, որտեղից Խաչատուրին ռազմաճակատ էր ճանապարհել, հուշարձան կանգնեցրեց, որը մինչեւ հիմա պահպանվում է: Ամբողջ Հայաստանում բացառիկ այդ հուշարձանի վրա հետեւյալ գրառումն է. **«Արձան Խաչատուր (Ներսես) Հակոբի Ներսիսյանի/ ծնված 1916թ./ Զոհված 1939թ./ Հոր եւ որդու վերջին հրաժեշտի վայրում սույն արձանը կանգնեցվում է հոր եւ եղբոր կողմից/ Զոհվեց դեկտեմբերի 7-ի սպիտակ փինների դեմ մղված հերոսական մարտերում»:** Հակոբ Մարդյանի մյուս որդին՝ Լազրը, մասնակցեց Մեծ հայրենականին եւ դարձյալ չվերադարձավ. անհայտ կորածների թվում էր, ինչի համար էլ հարազատները մինչեւ վերջ հավատում էին նրա վերադարձին:

Մանուցն ու Սիրանն ունենում են դուստր՝ Լենա (1949թ.), եւ որդի՝ Բաղդասար (1951թ.): Բաղդասարն ամուսնացել է համագյուղացի Վահանուշ Վարդանյանի հետ (Վահանուշը մահացավ 2007-ին), ունենում են երկու զավակ՝ Սիրան եւ Ռուբեն: Բաղդասար Թեւոսյանը պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ, Երեւանի պետական համալսարանի եւ Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս:

1969թ. հունիսի 5-ին վաղաժամ մահանում է Մանուց Թեւոսյանի կինը՝ Սիրան Ներսիսյանը (ըստ անձնագրի՝ Ժենյա Ներսիսյան):

1970թ. օգոստոսին Մանուց Թեւոսյանն ամուսնանում է երկրորդ անգամ: Ամուսնանում է Ռոմելա Օհանջանյանի հետ (1931-2011թթ.), ով բնիկ գորիսեցի էր՝ սերված Քոչունց տոհմից: Ռոմելան, ով մասնագիտությամբ բուժքույր էր եւ 1955 թվականից աշխատում էր Գորիսի շրջանային հիվանդանոցում, գյուղում ստանձնեց բուժկետի վարիչի գործը (այդ գործն ավելի վաղ կատարում էր Մանուց Թեւոսյանի վաղամեռիկ կինը՝ Սիրանը): 1975թ. նրանք բնակության են տեղափոխվում Գորիս: Մանուցի եւ Ռոմելայի ամուսնությունից ծնվում են Հրայր Թեւոսյանը (1971թ.) եւ Ժիրայր Թեւոսյանը (1972թ.): Հրայրը հիմա ապրում է ազատագրված տարածքներում, ունի մեկ որդի՝ Մանուց անունով եւ երկու դուստր՝ Մարիամ, Գայանե: Ժիրայրն ունի որդի՝ Հարութ, եւ դուստր՝ Հասմիկ: Ժիրայրը բնակվում է Գորիսի այն բնակարանում (Կամարի 164/31), որ մահվանից ուղիղ մեկ օր առաջ ստացել էր հայրը՝ Մանուց Թեւոսյանը (Մանուցի եւ Ռոմելայի ընտանիքը բնակվում էր Գորիսի Գետափնյա թաղամասի 5-րդ շենքում): Ռոմելա Օհանջանյանը հողին է հանձնվել Գորիսում:

## Վերջաբան

...1929թ. գյուղում կազմավորված կոլտնտեսությունը ցրվեց, ավելի ճիշտ՝ փոխարինվեց կազմակերպական այլ ձեւով՝ արտելով, որը ղեկավարում էր Կոլյա Դադոյանը (Դադայան)՝ ծագումով Կապանից՝ գործուղված Երեւանից: 1931թ. վերստին կազմավորվեց կոլտնտեսություն, որի առաջին նախագահն Ավագ Ղազարյանն էր, այնուհետեւ՝ Հակոբ Ղուկասյանը (1931-34թթ.), Միսակ Մարտիրոսյանը (1934-35թթ.), Նիկոլայ Ադամյանը (1935-36թթ.), Հակոբ Ղուկասյանը (1936-37թթ.), Ղազար Հակոբջանյանը (1937-39թթ.), Խաչատուր Հայրապետյանը (1939-42թթ.), Մանգասար Փանունցը (1942-45թթ.), Մանուկ Մկրտչյանը (1945-49թթ.), Մանուց Թեւոսյանը (1949-51թթ.), Սամսոն Հակոբջանյանը (1951-52թթ.), Սամսոն Տոռոզյանը (1952-53թթ.), Մխիթար Առաքելյանը (1953-55թթ.), Վոլոդյա Շափաղաթյանը (1955-59թթ.), Մանուց Թեւոսյանը (1959-64թթ.): Այնուհետեւ կոլեկտիվ տնտեսությանը փոխարինում է պետական տնտեսությունը, որը (մոտ մեկ տարի գոյատեւած միացյալ տնտեսության տրոհումից հետո) գլխավորում են Մանուց Թեւոսյանը (1965-75թթ.), Գրիշա Բաղդասարյանը (1975-77թթ.), Վոլոդյա Շափաղաթյանը (1977թ.), Գրիշա Բաղդասարյանը (1978-79թթ.), Արամայիս Թովմասյանը (1979-83թթ.), Միշա Գալստյանը (1983-86թթ.), Սմբատ Աղաջանյանը (1986-91թթ.): Ի դեպ, կոլտնտեսության նախագահների վերոգրյալ ցուցակը հայտնաբերեցինք Մանուց Թեւոսյանի նոթատետրում՝ գրված ըստ Հակոբ Ղուկասյանի (տարեթվերի հավաստիությունը ստուգման կարիք ունի):

Եռաբլրի սարահարթում՝ Մեծ Իշխանասարի, Արամազդի ու Պետրոսախաչի երկնահաս ու սրբազան գագաթների հավերժական հայացքի ներքո, Որոտանի ձախ ափին, մոտ հինգ հազար հա տարածքի վրա, հենց այդ մարդիկ են տարբեր ժամանակներում ղեկավարել գյուղի տնտեսական ընթացքը:

Ու նրանցից մեկի՝ Մանուց Թեւոսյանի կերպարին անդրադառնալը եւս մի առիթ է, որ տարիների հեռվից հարգանք ընծայենք մեր ազգի անցյալի՝ ժողովրդի հիշողության մեջ ապրող արժանավոր ղեկավար զավակներին:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Կրթօջախը նախապատրաստվում է հոբելյանին, իսկ սերնդափոխության խնդիրը սուր է դրված

Կապանի արվեստի պետական քոլեջում ավանդույթ է ձեւավորվել. նոր ուստարվա անդրանիկ օրը՝ սեպտեմբերի 1-ին, առաջին կուրսեցիները կնքվում են Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում (իհարկե, ովքեր մինչ այդ չեն կնքվել): Այս անգամ կնքահայրը Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն էր, ով էլ արարողությունից հետո շնորհավորեց առաջին կուրսեցիներին եւ հաջողություններ մաղթեց: Այս ուստարում կրթօջախ ընդունվեց 37 դիմորդ՝ երկուական հոգի «Փողային գործիքներ», «Ժողովրդական գործիքներ», «Երգեցողություն», «Երգչախմբավարություն», երեք դիմորդ՝ «Դերասանական արվեստ», վեցը՝ «Պարարվեստ», քսանը՝ «Դիզայն» մասնագիտացումների գծով: Դիմորդ չլինելու պատճառով ընդունելության քննություններ չեն կայացել «Դաշնամուր» եւ «Լարային գործիքներ» մասնագիտությունների գծով: Ընդ որում՝ դաշնամուրը բրենդային մասնագիտություն է կրթօջախի համար: Պատահել է, որ այդ մասնագիտացման գծով կրթօջախը մի ուստարում քանից ավելի շրջանավարտ է տվել: Ինչպես ասում են՝ առատ նյութ խորհրդածության համար: Նորաթուխ ուսանողներին հաջողություններ ցանկանալով քառամյա ուսումնառության ընթացքում՝ տեսնենք, թե ինչ հաջողություններ են գրանցվել նոր մասնագետների պատրաստման գործում:

2013-14 ուստարում քոլեջն ունեցավ 27 շրջանավարտ (համեմատության համար ասենք, որ անցյալ ուստարում 29 ուսանող ավարտեց կրթօջախը, առավելապես «Դիզայն» (9) եւ «Փողային գործիքներ» (5) մասնագիտությունների գծով: Ինչպես նշեց քոլեջի տնօրեն Լիաննա Հակոբյանը, իր պաշտոնավարման ընթացքում առաջին անգամ ունեցան շրջանավարտ «Երաժշտության տեսություն» մասնագիտության գծով (Տիգրան Գեւորգյան, դասախոս՝ Լեւոն Գեւորգյան): Տեւական ընդմիջումից հետո քոլեջը շրջանավարտներ ունեցավ նաեւ «Լարային գործիքներ» մասնագիտացման ջութակի դասարանում, ովքեր այս տարի ընդունվել են Երեւանի պետական կոնսերվատորիա: Ուսումնական տարում առաջին շրջանավարտները եղան նորաբաց «Պարարվեստ» մասնագիտության գծով: Ինչպես ակներեւ դարձավ տնօրենի հետ մեր զրույցից, կրթօջախում սովորողների սերնդափոխության խնդիրը սուր է դրված: Այժմ քոլեջում մեկական թավջութակահար եւ ջութակահար է սովորում: Յուսադրողն այն է, որ քոլեջի շրջանավարտներից լավագույններն ուսումը շարունակում են բուհերում, այդ թվում՝ 2013-14 ուստարվա քսանյոթ շրջանավարտից՝ չորսը: Տխրեցնողն այն է, որ որոշ օժտված շրջանավարտներ, ովքեր սոցիալապես անապահով ընտանիքներից են, հնարավորություն չեն ունենում բարձրագույն կրթություն ստանալ, եւ այդպիսի օրինակները քիչ չեն: Բացի այդ էլ կարծես մարել է հետաքրքրությունը դասական երաժշտության եւ ժողովրդական գործիքների հանդեպ:

Պետական որակավորման հանձնաժողովների նախագահները էլ, ամեն տարի մասնակցելով ավարտական քննություններին, դրանց արդյունքների մասին հաշվետվություններում արձանագրում են տխուր փաստը, որ տարեցտարի նվազում է քոլեջի դիմորդների թիվը: Բացի դրանից՝ նեղանում է նաեւ նրանց աշխարհագրությունը, հիմնականում Կապանից, Քաջարանից եւ դրանց մերձակա գյուղերից են: Երաժշտական մասնագիտությունների գծով դիմորդների սակավությունը քոլեջում բացատրում են մարզում եւ Կապանում դասական երաժշտարվեստի միջավայրի բացակայությամբ, մարզային փառատոներ ու մրցույթներ չկազմակերպելով (որտեղ ի հայտ են գալիս շնորհալի պատանիներն ու աղջիկները), մասնագիտական դպրոցների, ծնողների կողմից լավագույն շրջանավարտների կողմնորոշման պակասի, ինչպես նաեւ քոլեջի շրջանավարտների աշխատատեղերի հիմնախնդրով: Դա նաեւ այսօրվա կրթող մասնագետ-ուսուցչի նկատմամբ պետության հոգածության պակասի, մասնավորապես, աշխատանքի ցածր վարձատրության հետեւանք է: **«Երաժշտական եւ արվեստի դպրոցները քոլեջին դիմորդներով պետք է ապահովեն, մենք էլ իրենց դասավանդող կադրերով, երկկողմանի կապը միշտ պիտի գործի: Մասնագիտական դպրոցներում եւ քոլեջում աշխատող դասատուներն ու դասախոսները հիրավի մեծ նվիրյալներ են, իրենց գործի էնտուզիաստներ,** – ասում է Լիաննա Հակոբյանը եւ հավելում, – **գեղեցիկի մի ամրոց է Կապանի արվեստի պետական քոլեջը, որ կարիք ունի սիրո, փայփայանքի եւ հոգածության»:**

## Պրոպագանդելով դասական երաժշտություն

Պահպանելով տարիներ ի վեր ձեւավորված բարի ավանդույթը՝ այս տարի եւս արվեստի պետական քոլեջը սյունեցուն հասանելի դարձրեց դասական երաժշտարվեստը եւ գեղարվեստը՝ կազմակերպելով համերգներ եւ ցուցահանդեսներ: Դրանք իրականացվում են ուսումնական ողջ տարվա ընթացքում, բայց մայիս-հունիսին ավելի հաճախադեպ են լինում: Ըստ տնօրեն Լիաննա Հակոբյանի՝ Կապանում պակասում է մշակութային միջավայրը, եւ բացը լրացնելուն են միտված այդ միջոցառումները: Բացի դրանից՝ Կապանը, ինչպես կարծիք հայտնեց մեր զրուցակիցը, հրամայական պահանջ ունի ցուցասրահ ունենալ, որտեղ անհատական ցուցահանդեսներ կկազմակերպվեն, թե չէ, ասենք, կապանցի գեղանկարիչների աշխատանքներին ծանոթացնելու համար քոլեջի սովորողներին տանում են նրանց արվեստանոցներ:

Հունիսին քոլեջի երգեհոնային դահլիճում դասական երաժշտության համերգների շարք կայացավ: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի եւ Կապանի արվեստի պետական քոլեջի համագործակցությամբ տեղի է ունեցել կոնսերվատորիայի պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի դասարանի ուսանողների՝ Անուշ Բաբալարյանի



Մերի Պետրոսյան, Միջազգային մրցույթի դափնեկիր

(Կապանի արվեստի պետական քոլեջի շրջանավարտ), Ադրինե Կարասեֆերյանի, Դավիթ Բախշիյանի եւ քոլեջի սովորողների՝ միջազգային մրցույթի դափնեկիր Մերի Պետրոսյանի, նույն մրցույթի դիպլոմակիր Արկադի Անդրեասյանի դաշնամուրային երաժշտության համատեղ համերգը, որը համընկավ Արամ Խաչատրյանի ծննդյան օրվան եւ նվիրվեց մեծանուն կոմպոզիտորի հիշատակին: Հունիսի 10-ին քոլեջի երգեհոնային դահլիճի բեմահարթակը տրամադրվել էր ՀՀ կոմպոզիտորների միության երիտասարդ կոմպոզիտորներին: Ի շարս այլ կատարումների՝ ելույթ ունեցավ Սաթենիկ Հակոբյան-Ուլիխանյանը, ով դասական ստեղծագործություններ հնչեցրեց կապանցիներին մինչ այդ անհայտ գործիքով՝ տերմեն-վոքսով (երաժշտությունը հնչում է առանց գործիքին հպվելու, ձեռքերի շարժումներով): Հունիսի 17-ին քոլեջի երգեհոնային դահլիճում ուսումնական տարվա ձեռքբերումներն ամփոփեց հաշվետու համերգ-ցուցահանդեսը: Վերջինում ներկայացված էին կրթօջախի գեղարվեստի մասնագիտությունների ուսանողների աշխատանքները: Դաշնամուրային երաժշտության եւս մի համերգ կայացավ հունիսի 20-ին արվեստի պետական քոլեջի երկրորդ կուրսի ուսանող Արկադի Անդրեասյանի եւ դասախոս Լիաննա Ստեփանյանի մասնակցությամբ: Նախատեսված էր նաեւ Կոմիտասի անվան լարային քառյակի համերգը, բայց այն չկայացավ հովանավորների բացակայության պատճառով: Ինչպես կարելի է նկատել, դասական երաժշտության պրոպագանդմանը միտված համերգներն այս անգամ կայացել են հիմնականում կրթօջախի դասախոսների եւ սովորողների ուժերով: Անսանք Լիաննա Հակոբյանի խոսքին. **«Կարծում եմ դասական երաժշտության պրոպագանդման գործը քոլեջում ստացվում է: Ինչպե՞ս: Մեքենա ենք գտնում, մեկնում համերգների: Իսկ Կապանում դասական երաժշտության համերգներ կազմակերպվում են միայն աշնանը եւ գարնանը: Ցավում եմ, որ մեր դահլիճը եւ ուսումնական մասնաշենքը չեն ջեռուցվում: Յոթ-ութ տարի է, ինչ լոկալ ջեռուցման համակարգի խնդիրը լուծված է, բայց... համերգային դահլիճը չենք կարողանում ձմռանն օգտագործել: Հրաշալի ակուստիկա ունի դահլիճը, ով մի անգամ ելույթ է ունեցել, ցանկություն է հայտնում հաջորդ անգամ եւս գալ եւ ելույթ ունենալ: Բայց հնարավորություն չունեմ հրավիրելու: Հովանավորների օժանդակությունը պիտի լինի: Դպրոցականի ֆիլհարմոնիան Կապանում աշնանը գործեց, գարնանը՝ ոչ, որովհետեւ անհրաժեշտ գումարը չկարողացանք փոխանցել: Մեր դասախոսների եւ սովորողների ուժերով ենք փորձում քոլեջում ինչ-որ բան կազմակերպել»:**

## Հաջողություններ հոբելյանի նախաշեմին

2013-2014 ուստարին արգասաբեր էր Կապանի արվեստի պետական քոլեջի համար: Կրթօջախի ուսանողները մասնակցություն են ունեցել Գյումրու «Վերածնունդ» միջազգային 6-րդ մրցույթ-փառատոնին: «Դաշնամուր» մասնագիտացման առաջին կուրսի ուսանողուհի Մերի Պետրոսյանը (դասախոս՝ Մարինա Նահապետյան) արժանացել է դափնեկրի կոչման եւ երկրորդ մրցանակի, իսկ երկրորդ կուրսի ուսանող Արկադի Անդրեասյանը (դասախոս՝ Լիաննա Ստեփանյան)՝ պատվավոր դիպլոմակրի կոչման:

Երկարատեւ ընդմիջումից հետո նոր հաջողություն է գրանցվել նաեւ «Փողային գործիքներ» մասնագիտացման գծով: Քոլեջի ֆլեյտայի դասարանի առաջին կուրսի ուսանողուհի Լիա Գրիգորյանը (դասախոս՝ Արթուր Մովսիսյան) մասնակցություն է ունեցել «Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային չորրորդ փառատոնին՝ արժանանալով դիպլոմակրի կոչման եւ սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ ելույթ ունեցավ Գյումրիում կայացած գալա համերգին:

Ավանդական է դարձել քոլեջի ուսանողների մասնակցությունը Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի կազմակերպած ուսանողական գիտաժողովներին: Այս ուսումնական տարում քոլեջի չորրորդ կուրսի ուսանողներ Անուշ Հարությունյանը («Դաշնամուր» մասնագիտացում) եւ Տիգրան Գեւորգյանը («Երաժշտության տեսություն» մասնագիտություն՝ դասախոս՝ Լեւոն Գեւորգյան), եւս մասնակցեցին գիտաժողովին՝ արժանանալով խրախուսանքի:

Ավանդական են դարձել նաեւ մասնագիտական դասընթացների, մեթոդամանկավարժական ընթերցումների եւ վարպետաց դասերի անցկացումը ՀՀ կրթության եւ գիտության, ինչպես նաեւ մշակույթի նախարարությունների մասնագետների կողմից: Այս ուստարում քոլեջի մի խումբ դասախոսներ մասնակցել են ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից Կապանում կազմակերպված մասնագիտական դասընթացներին: «Մշակութային կրթության աջակցություն» հիմնադրամի մասնագետներ, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ Սերգեյ Քեչեկի, Անահիտ Ներսիսյանի (դաշնամուր), Անժելա Աթաբեկյանի (քանոն), Սուսաննա Մարտիրոսյանի (երգեցողություն), դասախոս Նոննա Ոսկանյանի (երաժշտության տեսություն), ջութակահարներ Տիգրան Տոհրամաջյանի, Նորա Այվազյանի եւ այլոց կողմից քոլեջում անց են կացվել մեթոդամանկավարժական ընթերցումներ եւ վարպետաց դասեր, որոնք բարերար ազդեցություն են թողել դասախոսների եւ ուսանողների մասնագիտական ու կատարողական ունակությունների զարգացման վրա:

Ուսումնական գործընթացին զուգահեռ անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ: Հուշարձանների պահպանության միջազգային օրը «Երգեցողություն» մասնագիտության ուսանողները եւ երկսեռ երգչախումբը հոգեւոր ստեղծագործությունների եւ շարականների կատարումով հանդես են եկել միջնադարյան հոգեւոր եւ պատմամշակութային կոթող Վահանավանքի վանական համալիրում:

«Գեղանկարչություն» եւ «Դիզայն» մասնագիտությունների ուսումնական պրակտիկան անցկացնելու նպատակով «Դանդի փրիշս մեքալս Կապան» ՓԲ ընկերության աջակցությամբ կազմակերպվել է եռօրյա այց մայրաքաղաքի մի շարք պատմամշակութային օջախներ՝ Մարտիրոս Սարյանի, Սերգեյ Փարաջանովի, Արամ Խաչատրյանի, Պարույր Սեւակի տունթանգարաններ, Հայաստանի պետական պատկերասրահ, օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, ինչպես նաեւ Էջմիածին, Խոր Վիրապ, Ամաղու Նորավանք եւ Զորաց քարեր:

Այս այցելությունը հնարավորություն է տվել ուսանողներին ծանոթանալ պատմամշակութային հուշարձաններին, մշակույթի օջախներին, ձեռք բերել մասնագիտական հմտություններ, ընդլայնել մտահորիզոնը, ձեւավորել գեղագիտական ճաշակ, սոցիալապես անապահով ուսանողներին՝ առաջին անգամ լինել Երեւանում եւ չխամրող տպավորություններով վերադառնալ Կապան:

2015-ին լրանում է քոլեջի հիմնադրման 50-ամյակը, հոբելյանին քոլեջի կոլեկտիվը նախապատրաստվում է ամենայն պատասխանատվությամբ: 2014-15 ուսումնական տարում, կրթօջախի 50-ամյակի շրջանակում, նախատեսվում են բազմաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, համերգ-ցուցահանդեսներ Կապանում, Սյունիքի մարզում եւ մայրաքաղաք Երեւանում, տոնակատարությունների շարքը կեզրափակվի երգեհոնային դահլիճում կայանալիք հոբելյանական հանդիսությամբ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



# Ռոմիկ Սարդարյան

Հիշատակի խոսքի փոխարեն



**Ծնվել է 1945թ. Կապան քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Երեւանում: Ավարտել է պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:**
**Ռոմիկ Սարդարյանի բանաստեղծությունները, թարգմանությունները, հոդվածները պարբերաբար լույս են տեսել գրական մամուլում եւ առանձին ժողովածուներով: «Վայրկյանների երգը» (1975), «Հոգու երկիրը» (1980), «Կյանք հավերժ» (1999), «Ջրհոսի ժամանակը» (2004) եւ ուրիշներ սիրվել ու գնահատվել են ընթերցողների ու մասնագետների կողմից: Նա հասցրեց տեսնել նաեւ վերջերս ՀԳՄ հրապարակչությամբ լույս տեսած իր ստեղծագործությունների ընտրանին՝ «Մնացած կյանքի համար» խորագրով:**
**Պարգեւատրվել է մշակույթի նախարարության ոսկե մեդալով եւ արժանացել է ՀԳՄ Պարույր Սեւակի անվան մրցանակի:**
**Ռոմիկ Սարդարյանը մասնակցել է Կապանի առաջին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպմանն ու ամրապնդմանը:**
**Հայաստանի գրողների եւ ժուռնալիստների միությունների անդամ էր:**
**Ստորեւ՝ հատված «Մնացած կյանքի համար» գրքից:**

Ըստ մեր տոհմական ավանդազրույցի՝ մեծ պապս եղել է Դավիթ Բեկի ներկայացուցիչը Պարսկաստանում, ունեցել է սարդարի լիազորություն: Այստեղից էլ մեր Թումանյան ազգանունը փոխվել-դարձել է Սարդարյան: Ես ծնվել եմ Կապանում, մեծացել եմ մեծ՝ 15 հոգանոց ընտանիքում: Մորական պապս համոզված դաշնակցական էր, ես Նժդեհի անունն առաջին անգամ նրանից եմ լսել: Նժդեհն ու Դավիթ Բեկը իմ մանկության խորհրդանիշներն են, իսկ իմ պոեզիայի բնապաշտությունը սկիզբ է առնում Խուստուփից ու Վաչագան գետից, որի ափին էր գտնվում մեր տունը: Մանկությանս կենտրոնական դեմքը հայրս էր: Նա շատ վաղ մահացավ, ու ես հազիվ եմ հիշում հորս, սակայն իմ այան, որը մեր գերդաստանի նահապետն էր, հաճախ էր պատմում հորս մասին, ու այդ պատմություններից հորս կերպարը անչափ վառ ու կենդանի էր դառնում:

Ես ընթերցասեր էի, դպրոցական տարիներին ամբողջ հայ գրականությունը կարդացել էի, սակայն երբեք բանաստեղծություն գրելու ցանկություն չէի ունեցել: 7-րդ դասարանում ծանր հիվանդացա ու դպրոցի բուժկետում մի քանի օր պառկեցի ուշակորույս: Երբ աչքերս բացեցի, տեսա՝ անկողնուս մոտ մի փոքր տղա է նստած՝ երկրորդ-երրորդ դասարանցի: Տղան շատ ուրախացավ, որ ես ուշքի եկա: Հետո ասաց, որ ինքը բանաստեղծ է ու սկսեց արտասանել իր գրած բանաստեղծությունը:

*Մայրիկից լավ բան*
*աշխարհում չկա,*
*Մայրիկից քաղցր բան*
*չկա աշխարհում,*
*Ինչ ուզում ես արա,*
*Մայրիկից լավ բան*
*աշխարհում չկա:*

Ես առաջին անգամ էի կենդանի բանաստեղծ տեսնում ու ցնցված էի այս բանաստեղծությունից: Այդ օրը ես երկու բանաստեղծություն գրեցի Մասիսի մասին:

Երբ սկսվեց շարժումը, ես գնացի Կապան, եւ մենք ընկերներով ստեղծեցինք ինքնապաշտպանական ջոկատներ: 1993թ. ծառայության անցա «Հայ զինվոր» թերթում: Դրանք իմ կյանքի լավագույն, ամենապատվաբեր տարիներն էին: Կատարվել էր բոլորիս նվիրական երազանքը՝ կազմավորվել էր հայոց ազգային բանակը, եւ հող էր ազատագրվում: Մենք զինվորական լրագրողներ էինք ու անչափ հպարտ էինք դրա համար, գիտակցում էինք այն մեծ պատիվն ու պատասխանատվությունը, որ դրված էր մեր ուսերին, ավելի ճիշտ՝ որ մեր սրտում էր: Մենք դիրքերում էինք, առաջին գծում, զինվորի կողքին: Զինվոր էինք: Մենք սիրում էինք մեր գործը, նվիրված էինք այն գաղափարներին, որ քարոզում էինք, սիրում էինք հող ազատագրող զինվորին, սիրում էինք մեր ազատագրական կռիվը:

■

## Զանգեզուր

*Զանգեզուրի երկնքից հակվել են*
*Նարազարներիս դեմքերը -*
*Եվ Աստծո:*

*Ուրեմն մեռնողից մեկնումեկի*
*Բաժանման - ժամանման*
*Ժամանակն է:*

*Այս նորածին լեռները վաղուց*
*Ճերմակ թագեր են կրում: -*

*Օ, մանկություն*
*Իմ եւ Նայրենիքիս:*

## Ծվեններ

*Աչքերի փայլ հրացայտ-հրավիրող*
*հայացքներ -*
*Առկայծում են խավարում, ու*
*ծվեններն ամպերի*
*Պայկերներ են բզկրված - հար եւ*
*նման վամպիրի:*

*Գարնան նման դյութական, նշված*
*գաղտնի կնիքով, -*
*- Տեսի՛լք, քեզ չեմ թաքցնի*
*առագաստ ու հարմնաքող,*
*(Օ՜, թե սահե՛ր մի ծվեն - գարնան*
*լույսն այս - հանգցնե՛ր):*

*Շլացուցիչ ճերմակներ -*
*կարմիրներից շուրթերի -*
*Մահվա՞ն ձեռքն է, որ անճիգ -*
*սեւերի մեջ անթերի*
*Պահի պայկերն է բանում -*
*երակներով արծաթե:*
*Գարնա՞ն հանգույն, եւ սակայն - լի՜*
*ընդերքի գաղտնիքով -*
*- Սա չէ՞ պահը իմ կյանքի, որ*
*սահում է երկնքով,*
*Անհնարին մի աղոթք - տեսիլքն*
*այս հու՞շ դարձներ:*

*Աչքերի փայլ հրացայտ, հրավիրող*
*հայացքներ -*
*Պայկերնե՛ր են բզկրված - հար եւ*
*նման վամպիրի,*
*Եվ փորձում են - ժպտալիս -*
*ժանիքները թաքցնե՛լ:*

***

*Մեր փխրած հողի վրա*
*Մեր վարը նորից աճեց: -*
*- Թողեք, որ քիչ մոռանամ -*
*Նիսուսը ինչպես խաչվեց:*

*Մեր փխրած հողի վրա*
*Ապրել ենք քիչ լավ, քիչ վատ:*
*- Թողեք, որ քիչ մոռանամ,*
*Թե ահ կա, մահ ու արատ:*

*Մեր փխրած հողի վրա*
*Չենք եղել - մենք մեկուսի: -*
*- Թողեք, որ քիչ մոռանամ,*
*Որ քուրմն ենք - Վերջին Նույսի:*

## Երազս

*Գնում եմ ես երազում*
*Ճանապարհով վերին.*
*- Ասա, ի՞նչ ես ուզում*
*Հիմա ինձնից, Տեր իմ:*

*- Խոստովանիր, Տեր Աստված,*
*Որ սիրում ես դու ինձ,*
*Չլինի՞, թե համբացած*
*Մեռնեմ հրացումից...*

*-Որքան գույներ ունես, տեր,*
*Պահած աչքից հեռու,*
*Ի՞նչ նյութեր ու կրքեր են*
*Քո էս վերում եռում-*
*Ահագնանում են, ահա,*
*Իմ աչքերը լույսից-*
*Արդեն հեռու եմ մահվան*
*Նույս ու պատուհասից:*

## Ընկերներիս

**(Քայլերգ)**

*-Ե՛վս մի լավ քայլ -*
*Ե՛վս մի պինդ վերք -*
*Ու էլ չենք լինի,*
*Լսու՞մ եք -*

*Տղե՛րք. -*
*Անմահ մահերն են խուժել*
*Մեջներս -*
*Գնում ենք, տղերք:*

*Խմե՛նք ամենաշողշողուն գինին,*
*Դիմե՛նք զենքերից լավագույնին,*
*Նայենք երկնքի անդունդն ամեհի,*
*(Մենք հի՞ն ենք - տղե՛րք,*
*Մեր երկի՞նքն է հին):*
*Մահը խուժել է մեջներս*
*Տղե՛րք,*
*Ե՛վս մի լավ քայլ,*
*Ե՛վս մի պինդ վերք -*
*Ու կանմահանանք -*
*Այդպե՛ս է, տղերք:*

■

# ՌՈԲԵՐՏ ԿԱՄՈՅԱՆ. «Ես նկարելու եմ նաեւ մահվանից հետո»

Խոսք hrաժեշտի

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

թատրոններում՝ ռեժիսոր, նկարիչ: 1967-1988թթ. Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում էր՝ բեմադրող ռեժիսոր, նկարիչ, գլխավոր նկարիչ: Զուգահեռաբար բեմական ձեւավորումներ է կատարել Գյումրու, Գորիսի թատրոններում: 1971 թվականից գործում է նրա հիմնադրած նկարչական ստուդիան, որտեղ տարիներ ի վեր ուսանել են հարյուրից ավելի պատանիներ եւ աղջիկներ: Եվ հիմա մնում է սփոփվել իրողությամբ, որ նրա թողած ժառանգությունը ոչ միայն մեծաթիվ կտավներն են, այլեւ իր հիմնադրած գեղարվեստի ստուդիան, որտեղ գեղագիտական դասեր են ստացել եւ գույնի ու գծի լեզուն սովորել նրա սաները:

1960-ականների կեսերից մասնակցել է հանրապետական եւ համամիութենական ցուցահանդեսների: Անհատական ցուցահանդեսներ է բացել Լենինգրադում, Ռիգայում, Յուրմալայում, Վիլնյուսում, Երեւանում, Կապանում: Նրա ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի թանգարաններում եւ մասնավոր հավաքածուներում: Նկարելուց զատ փորձում էր իր խոհերն ու ապրումները թղթին հանձնել չափածո խոսքով: Համակողմանի զարգացած այր էր. համաշխարհային գրականություն եւ երաժշտություն գիտեր, հատուկ փիլիսոփայություն էր ուսումնասիրել, ճարտարապետություն, մյուս արվեստները: Ռոբերտ Կամոյանը նաեւ հետաքրքիր կյանք ապրած անձնավորություն էր՝ հեռավոր ճամփորդությունների է մեկնել Սիբիր, Հեռավոր արեւելք, Կամչատկա՝ երբեմն արկածներով լի, հանքում ֆիզիկական ծանր աշխատանք է կատարել՝ ընտանիքի հոգսը թեթեւացնելու նպատակով: Բայց ամեն ինչից զատ՝ նա ճշմարիտ արվեստագետ էր... Ավաղ, ժամանակակից կերպարվեստում իր մնայուն տեղը գտած, ինքնատիպ ձեռագիր ու գեղագիտական ոճ մշակած գեղանկարիչը մինչ իր անժամանակ մահը չգնահատված ու հանրությանն ըստ պատշաճի չներկայացված մնաց: Ցավոք, բնատուր տաղանդ ունեցող շատ շատերի ճակատագիրն այդպիսին է... Դրսերում կարող էր փառքի ու կոչումների արժանանալ, բայց այդ ամենը նրա համար չէր: Հեռուներից եկավ հայրենի եզերք. եւ այլեւս ոչ մի տեղ չէր ցանկացել ապրելու գնալ: Նրանը Խուստուփն էր, հայրենի բնությունը, իր բնօրրանի պարզ ու անմիջական մարդիկ: **«Ուրիշ տեղը խորթ է, այնտեղի դեմքերն էլ են խորթ»,** – փիլիսոփայում էր այդ առիթով:

Ռոբերտ Կամոյանն ընդգծված անհատականություն էր, ազատ, անկաշկանդ, արդիական ձեւամտածողությամբ, համառ էր, անդավաճան իր սկզբունքներին: Խարսխվելով ազգայինի վրա՝ նրան հաջողվում է ներդաշնակել հայ արվեստի ավանդույթները եւ այդ հենքի վրա ստեղծել նոր գործեր: **«Կամոյանը թե՛ իր ոճով, թե՛ իր մտածելակերպով յուրահատուկ արվեստագետ է: Նկարչի այդ տեսակից շատ բան կարելի է սովորել»,** – նրա մասին ասում էին գեղանկարչությունը որպես մասնագիտություն ընտրած նրա սաները:

Ռոբերտ Կամոյանը «Սյունյաց երկիր» թերթի անկեղծ բարեկամն էր, խորհրդատուն, նաեւ խմբագրության հանձնարարություններն էր կատարում, նրա վրձնին են պատկանում թերթի հատուկ թողարկումների շապիկներին տպագրված Խաչատուր Աբովյանի, Ակսել Բակունցի, Սուրբ Գրիգոր Տաթեւացու, Նիկողայոս Ադոնցի, Ռաֆայել Մինասյանի դիմանկարները, Զագեձորի բերդի (Գորիսի), Վահանավանքի նավակատիքը պատկերող եւ Ագարակ քաղաքի գեղանկարները: Համով, հոտով մարդ էր, մթնոլորտ ու աուրա ստեղծող: Անասելի հաճույք էիր ստանում փիլիսոփայական ատաղձով նրա խոսքն ու խոհը լսելիս:

Մեր թերթի՝ գեղանկարչի ծննդյան օրվան նվիրված անցյալ տարվա հունվարի 31-ի համարում գրել էինք. **«Այսօր էլ Ռոբերտ Կամոյանը շարունակում է ստեղծագործել երիտասարդական ավյունով: Նա, իր իսկ վկայությամբ, դեռեւս տասը տարվա ստեղծագործական աշխատանքի ծրագրեր ունի»:** Անակնկալ մահն անավարտ թողեց բազում ստեղծագործական մտահղացումներ: Անչափ է կորստյան ցավը, այն վակուումը, որ իր հետեւից թողեց արվեստագետը, երբեք չի լցվելու: Քանզի նման անհատականություններ մեր օրերում սակավ են հանդիպում: Ահավասիկ, նրա խոսքը. **«Արվեստագետները գալիս են ու անց կենում: Փորփրենք նրանց անցյալ կյանքը. հուսահատության ու մարդատյացության, խարդախության կամ ինքնագոհության եւ ոչ մի հիմք: Այս մեծագույն միստիկները միշտ էլ հավասարակշռված են, եւ ոչինչ չի կարող սասանել նրանց հավատն առ գեղեցիկը եւ գոյության անվերջությունը»:**

Արվեստագետի իր ապրած կյանքով նա հաստատեց հայտնի գրողի ձեւակերպումը, թե նկարիչն իր ժամանակի խիղճն է: Միակ բանը, որը չէր բավականացնում արվեստագետին, ժամանակն էր: **«Մի մարդ էլ չկա, որ ժամանակ պարտք անեմ, օրվա 24 ժամը չի հերիքում,** - փորձում էր կատակել եւ հավելում էր, - **ես նկարելու եմ նաեւ մահվանից հետո»:**

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Մեր շատ սիրելի մայր, քույր, ընկերուհի, ուսուցչուհի, դասղեկ տիկին Համեստ Հասրաթյան**

1986-92 ուստարիների Ձեր դասղեկական դասարանի աշակերտները շնորհավորում են Ձեզ՝ Ուսուցչի տոնի եւ Ձեր աշխատանքային գործունեության քառասուն երկար ու ծիգ քրտնաջան տարիների առթիվ:

Դուք Ձեր անվանը վայել անձնավորություն եք, ինչը մեզ ստիպեց հիշելու մեր վեց տարիները:

Սիրելի՛ դասղեկ, այսօր Դուք մեզնից շատերի երեխաների ուսուցչուհին եք նաեւ:

Ձեզ ցանկանում ենք գարնան զարթոնք, ամռան ջերմություն, աշնան բարիքներ եւ ձմռան անդորր:

**Բարի մաղթանքներով՝ 1986-92 ուստարիների Ձեր դասղեկական դասարանի աշակերտներ**




# Հացի տոն Սիսիանում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 4

լի, որ քիչ մարդ էր դատարկաձեռն եկել: Բերել էին իրենց տանը թխած հացը, խմորեղենը, պապերից հիշատակ մնացած հին, երբեմն մեծարժեք իրեր, առարկաներ՝ թանգարանի ցուցանմուշները համալրելու համար: Նախանձել կարելի էր:

Անկեղծ ասած, սա սովորական միջոցառում չէր, այլ սրբազան հացին նվիրված ծիսակատարություն:

Այս հոդվածը գրելուն նախապատրաստվելու ընթացքում փորփրում էի հիշողությունս, համացանցի համապատասխան կայքերը, քրքրում հին լրագրերը, թերթում հանրագիտարանները: Ստացած տեղեկություններս ցանկանում եմ հաղորդել իմ ընթերցողներին՝ համոզված լինելով, որ այդ տեղեկություններից շատերը նրանք առանց իմ օգնության էլ գիտեն: Բայց սա այն դեպքն է, որ կրկնությունը չի վնասի:

Գաղտնիք չէ, որ հայի օջախում հացը սրբություն է եղել: Հայը հացին նայել, նայում է որպես շնչավոր էակի: Մեր մեծերը, եթե գետնին ընկած հացի կտոր են նկատել, բարձրացրել են, մաքրել փոշին, համբուրել ու դրել մի բարձր տեղ՝ եթե ոչ մարդկանց, գոնե հավքերին բաժին լինի: Հացը նաեւ ամենազոր է: Հիշում եմ (բայց ինչո՞ւ միայն ես), եթե մութն ընկնելուց հետո որեւէ փոքրիկի հանում էին տնից, ապա անպայման նրա ծոցում հաց էին դնում. հացը զորեղ է, պաշտպանում է: Այս գեղեցիկ սովորույթն այսօր էլ շատ տեղերում պահպանվում է: Երբ օջախ նորահարս է մտնում, տան շեմին նրա ուսերին լավաշ հաց են գցում, մեկին օրհնելիս ասում ենք՝ օջախիդ կրակն ու հացն անպակաս լինեն:

Իսկ հիմա՝ հացի մասին իմ իմացած ու տարբեր աղբյուրներից քաղած տեղեկությունների մի մասը:

Ճիշտն ասած մտածում էի, որ հացի տոնի շրջանակներում կցուցադրվեն հացի տարբեր տեսակներ, տարբեր տեխնոլոգիաներով թխված հաց: Ավելին, տնից ինձ հանձնարարել էին տեսականուց ընտրովի գնում կատարել տան համար: Գուցե սա



որպես հուշում ընդունեն տոնի կազմակերպիչները հաջորդ տարիներին տոնակատարությունը կազմակերպելիս:

Ուրեմն այսպես, *կաթնահունց:* Սա մի քիչ տոնական հացատեսակ է: Այստեղ խմորը հունցվում է ոչ թե ջրով, այլ ուղղակի կաթով: *Կարտոֆիլով բոքոն հաց:* Այսպիսի հաց թխելն աղքատության նշան էր ու աղքատի էլ հաց, չնայած թե՛ ձեւով, թե՛ համային հատկանիշներով գերազանցում էր սովորական բոքոնին: Սպիտակ էր ու երկար ժամանակ էր փափուկ մնում:

Երեխաներիս համար ուրիշ համ ու հոտ ուներ *ջաղաց-բաղարջը* ու մեկ էլ *դաշտ տեսած ու տուն եկած հացը:* Հացի առաջին տեսակի անունն ավագներին ամեն ինչ ասում է, իսկ երիտասարդներին էլ ես ասեմ: Բաղարջը թխվում է ջաղացում, առանց թթխմորի ու աղի: Խմորը հունցելուց հետո մի տափակ քարի վրա կրակ էին վառում ու սպասում՝ մինչեւ քարը լավ տաքանա: Հետո կրակը հեռացնում էին ու խմորաբլիթը դնում տաք քարի վրա: Ահա եւ քեզ ջաղաց-բաղարջ:

Իսկ դաշտ տեսած ու հետ եկած հացն այն է, որ, ինչպես մեծ Սահյանն է ասում, մեծ պապի հետ դաշտում ման է եկել, իսկ պապն էլ հոգնածությունից չի կարողացել հաց ուտել, հացը հետ է բերել տուն: Ահա թե ինչու է նա այդքան համով: Իրոք շատ համով է: Նրա հետ թերեւս իր համով կարող է մրցել միայն պողի վրա կարմրացնելու աստիճան տաքացրած բոքոնը:

Դուք եղե՞լ եք ժողովրդական նվաճումների Մոսկվայի ցուցահանդեսի տիեզերագնացության տաղավարում: Ես եղել եմ: Այնտեղ շատ հետաքրքիր ցուցանմուշներ կային, բայց կար մի անկյուն, որտեղ նման բաներ չկային: Դրանց փոխարինում էր տեղեկատվությունը: Հեղինակավոր հանձնաժողովին առաջարկում են ընտրել երկրային յոթ կերակրատեսակ, որոնք կարելի լիներ վերցնել երկարատեւ տիեզերական թռիչքի ժամանակ, եթե դա հնարավոր լիներ: Խիստ մասնագիտական հանձնաժողովն աշխարհի ժողովուրդների հարուստ խոհանոցից ընտրություն է կատարում. դրանց մեջ են ընդգրկվում հայկական տոլման եւ լավաշը: Այ, այդպես: Կարելի է, իրոք, հպարտանալ: Թե չէ՝ հպարտանում ենք, որ այսինչ նշանավոր ֆուտբոլիստի հորեղբոր տղան հայ աղջկա հետ է ամուսնացել:

Ի դեպ, լավաշ բառը մեր հարուստ բառապաշարի այն հազվագյուտ բառերից է, որ օտարները մեր լեզվից փոխառել են եւ օգտագործում են առանց թարգմանելու: Հենց այդպես էլ հնչում է՝ լավաշ:

Հրապարակախոս, արձակագիր Զորի Բալայանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է ծայր հյուսիսում որպես բժիշկ: Պատմում է, որ տեղացիները հացին բագրատ են անվանում, Բագրատը Մեծ եղեռնից փրկված հայ երիտասարդ է: Ճակատագիրը նրան նետել է Ռուսաստանի ծայրը: Տեղաբնիկներն առաջին անգամ հացի հետ ծանոթացել են Բագրատի միջոցով: Բագրատը նրանց ե՛ւ հաց ուտելն է սովորեցրել, ե՛ւ թխելը: Երախտապարտ մարդիկ էլ նրա անունը դրել են հացի վրա: Բեր բագրատ ուտենք: Բագրատը Զ.Բալայանի «Ցավ» վեպի գլխավոր հերոսն է («Սովետական գրող» հրատարակչություն, 1978թ. Երեւան):

Ընդունված է ասել, որ Շիրակը Հայաստանի հացի շտեմարանն է: Բայց նաեւ փաստ է որ Սիսիանի ենթաշրջանը (նախկինում՝ շրջան) իր մակերեսով ամենամեծն է հանրապետությունում: Այստեղ գերակշռում են ե՛ւ արոտները, ե՛ւ վարելահողերը: Փաստ է նաեւ այն, որ դժվար տարիներին հարեւան շրջաններից տասնյակ ընտանիքներ են եկել այստեղ՝ երեխաներին սովից փրկելու համար, ու այդպես էլ մնացել, ինչպես ընդունված է ժողովրդական լեզվով ասել, դարձել սիսիանցի: Այս տողերը գրելիս մի փոքրիկ պատմություն հիշեցի: Գայթակղությունը մեծ է, պատմում եմ:

Տարիներ առաջ իմ լավ ընկեր ու բարեկամ, սյունեցիներից շատերի կողմից հարգված ու սիրված Գագիկ Հայրումյանը, ով ծնունդով Վերիշեն գյուղից է, մի զրույց պատմեց, որ ինքն էլ գյուղի մեծերից էր լսել: Մի սովի տարի գյուղի մի խումբ ջահելներ երազում են կուշտ փորով հաց ուտել: Տղաներից մեկն առաջարկում է պանիր վերցնել ու գնալ հացառատ Տեղ գյուղ, իր ծանոթներից մեկի տուն: Այդպես էլ անում են: Սրանց բախտից ծանոթի տանը հաց թխելիս են լինում: Փրփուր լավաշ, Տեղ գյուղի հայտնի բոքոն, սարի անարատ պանիր, սարեցի ջահել-ջիվան սոված տղերք: Ուտում են, ոնց են ուտում: Հանկարծ տղաներից մեկը նկատում է, որ լավ ուտողի համբավ ունեցող իրենց ընկերը հացն ուտում է առանց պանրի: Հարցնում են, թե ինչու է հացն առանց պանրի ուտում: Դե սա էլ ոչ ավել, ոչ պակաս ասում է, թե պանիրը հացի որակը գցում է: Այ, այդպիսի բաներ:

Օրը թեքվում է դեպի իրիկնամուտ: Հյուրերը կամաց-կամաց հեռանում են, բայց գնալուց առաջ մոտենում են միջոցառման գլխավոր ռեժիսորին ու դիրիժորին, տիկին Ծովինարին ու շնորհակալություն հայտնում: Ես չհասցրի դա անել Սիսիանում, այդ պատճառով էլ ասում եմ հիմա. «Օրհնվեք դուք, թող օջախներումդ միշտ կրակ լինի, տաշտում՝ հաց»:

**ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# Էլի մի մայր պակասեց աշխարհից, մի լա՜վ մայր



Խաչատրյանները կորցրին փառահեղ մի կնոջ, օջախը կորցրեց իր աննման մայրիկին, Մալինցյանները կորցրին իրենց դստերը, Գորիսն ու Խնձորեսկը կորցրին մանկապարտեզի շնորհաշատ տնօրենին, բոլոր տարիների սաները կորցրին իրենց սիրելի ու թանկագին ուսուցչին ու դաստիարակին:

Կյանքի 62-րդ տարում, միանգամայն անսպասելի, մահկանացուն կնքեց ընկեր Հասմիկը, ով իր ծննդավայր Գորիսից մինչեւ Խնձորեսկ վաստակել էր իր անվան տարածությունը՝ դառնալով նախադպրոցական գործի երեւելիներից մեկը:

Ընկեր Հասմիկը երկար տարիներ իր փոքրիկ սաներին ուղեկցել է հրաշք աշխարհներ, սովորեցրել նրանց հայրենասիրության, գեղեցիկի ու բարու լեզուն: Օվկիանոսի պես խորն է եղել ուսուցանողի, դաստիարակի ու մոր նրա բարությունն ու քնքշանքը: Կյանքին հրաժեշտ տվեց ապրելու ու արարելու ծաղկման շրջանում:

Հասմիկի մահը ցնցեց բոլորին, ամուսնուն՝ Սեյրանին, օջախի չորս զավակին, հարազատներին, ընկերներին, կոլեկտիվի անդամներին, համաքաղաքացիներին, համագյուղացիներին:

Նա սեր, հարգանք ու հեղինակություն էր վայելում բոլորի կողմից: Կնոջ, մոր, մտավորականի, երեխաների մեծ բարեկամի կերպարն ընդմիշտ կենդանի կմնա բոլորի սրտերում:

Նա օժտված էր բնական հմայքով, անմիջականությամբ, անկեղծությամբ, պարզ ու շիտակ խոսքով, ուղղամտությամբ եւ ազնվությամբ: Նա անմնացորդ նվիրված էր մանուկների ճշմարիտ դաստիարակության գործին: Նա հիմնարար գիտելիքներով օժտված մտավորական էր: Ընկեր Հասմիկն ապրող նռջեցյալ է եւ ընդմիշտ կմնա մեր սրտերում որպես լուսավոր մտքի ու շահեկան գործի նվիրյալ:

Խոր վշտով ցավակցում ենք նրա հարազատներին ու մերձավորներին: Թող օրհնյալ լինեն նրա անունն ու գործը:

**Խնձորեսկի մանկապարտեզի կոլեկտիվ**

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 29.09.2014թ.:

ԿՈՐԵԼ ԵՆ «Սիրարփի-Մարիամ» ՍՊԸ թիվ ՏԿՈՒ 00203 տրանսպորտային գործունեության թույլտվության լիցենզիայի 00001 եւ 00002 ներդիրները: Համարել անվավեր: